

11
11
11

ՄԱՀԱՏՈՒՐԻ

ՆՈՐ ՕՐԷՆՔԸ



ԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՃՈՒԱՑՈՒՑ

Ի Ր Ա Ի Ա Գ Է Տ

ԼՈՒԹՅԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Handwritten notes in Armenian script, including the name 'Լուսինե' (Lusine).



Կ. ՊՈԼԻՍ


Մկրտչր. Վ. Հովսեփիանիս

1926

Handwritten notes and signatures at the bottom of the page.

ՇԱՀԱՏՈՒՐՔԻ

ՆՈՐ ՕՐԷՆՔԸ




511

ՔԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՃՈՒԱՑՈՒՑ

Ի Ր Ա Ի Ա Գ Է Տ


ԼՈՒԹՅԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

Պրիւմար. Վ. Զոմբակյան

1926



ՇԱՀԱՏՈՒՐՔԻ

ՆՈՐ ՕՐԷՆՔԸ

Օրէնքին թարգմանութենէն առաջ, անհրաժեշտ
կը նկատենք վերլուծել այն ազգակները, զոր անհրա-
ժեշտ է ուսումնասիրել, խնդրին էութեան և օրէնքին
սգլոյն ըստ կարելւոյն թափանցելու համար:

Շահատուրքի օրէնքն ալ, քաղաքային, պատժա-
կան և այլ արդիական օրէնքներու պէս, ելմտական
կազմակերպութեան հիմնական բարենորոգման ու յե-
ղաշրջման արդիւնքն է, ու կը պարունակէ այնպիսի
արամագրութիւններ, որոնք ջո՛րդ անտեսուած են
զանազան և բազմազան օրէնքներու մէջ:

Զոր օրինակ, դրոշմատուրքի օրէնքէն զառ, ելմը-
տական օրէնքներու մէջ ժամանցում (միւրուր գէման,
prescription) երբեք գոյութիւն ունեցած չէր: Տարի-
ներու անվերջ հալովումը երբեք չէր կրնար ազատ-
կացուցանել ենթական, որ ջմահ գտապարտուած էր
հալածման մղձաւանջը կրելու այն տեսակ տուրքերու,
որոնք թերեւ ինքնին մտացութեան ենթարկուած են:

Սակայն, այժմ օրէնքը նախատեսած է այս պարագան (յօդ. 64):

Շահատուրքի օրէնքը, թէ՛ կառավարութեան և թէ օրէնսդիրներու մանրակրէի քննութեան, աշխատութեան բովէն անցած է, և հաւակ ուրեմն ընդհանուր տէրութեանց արդիական ձեւերէն ամէնէն ժողովրդական ու գործնական միջոցները որդեգրուած են:

Նախկին շահատուրքի օրէնքը (թէմէթթիւ) փոխելու համար, կառավարութիւնը տարիներէ ի վեր ջանք չէ՛ խնայած և յաջորդաբար երեք անգամ բաւական ընդարձակ ծրագիրներ ներհայտողուցած է: Ասոնք, անշուշտ մանրազնին քննութեամբ և Օրէնսդիր Ժողովին չորս կարեւոր յանձնաժողովներու ատենագրական յանձնարարութեամբ և պատմական մանրամասնութեամբ, յանձնուած են Ազգային Ժողովին գնահատման:

«Շահատուրքին հիմը դրուած է Թուրքիոյ մէջ, գրեթէ 1241ին, «Ինթիսապ րէսմի» անունին տակ: Այս տուրքը, ամառական-օրական խանութներու տուրքէն զատ, ընդհանուր ըմպելիներէ, սպառուած նիւթերէ, սօկիի կամ արծաթի պէս մետաղներէ, գոհարէ, ապածոյէ և այլ զանազան ցանկ ու ցուցակներով կը գանձուէր:

«1254ին, Ֆերմանով մը յիշեալ «Ինթիսապ» տուրքը ջնջուեցաւ, և 1255 թուակիր կանօնագրով, ամէն մէկուն հալուածին ու անասուններուն արժէքին համեմատութեամբ, արհեստավարներու և վաճառականներու տարեկան շահուն քանակին գնահատմամբ, հազարին որոշ չափով տուրք մը ամէն մէկ համայնքի անհատներուն սրուելով, հաւաքաբար կը գանձուէր:

«Տարեկան շահատուրքի ձեւը՝ թէպէտև այդ տա-

րիէն որոշուած կրնայ համարուիլ. սակայն տօրկա-
տարեկան շահը որոշելով յատկացուած տուրքէ մը տ-
ւելի, համայնքի վրայ նշանակուած ըլլալու բնօր-
ուէնէր:

«1275ին, «տրձանագրութեան հրահանգի» և
1277ին ալ «ընդհանուր տրձանագրութեանց կանոնա-
գրի»ն համաձայն, ձեռնարկուեցաւ անձերու, հողի ու
կալուածներու տրձանագրութեան: Միեւնոյն տակն
արհեստով և վաճառականութեամբ զբաղողներուն տա-
րեկան շահերն ալ գնահատուելով, շահատուրքը հաս-
տատուեցաւ, և տարեկան շահաբաժնին վրայ հողա-
րին 30 համեմատութեամբ տուրք գանձուիլ սկսաւ:

«Այս գրութիւնը շարունակ քսան տարի գործա-
գրուելէ յետոյ, 4 Փետրուար 1295 առժամեայ որոշ-
մնագրով, սոյն տուրքին քանակը հողարին 40, և
303 թուականին ալ հողարին յիսունի բարձրացաւ:

«1303 թուականին, շահատուրքը միմիայն ար-
հեստաւորներէ և վաճառականներէ կը գանձուէր:
Նոյն տարին, պիւտճէի բացը գոցելու նպատակաւ,
յաւելման ծրագրով, թոշակաւոր պաշտօնեաներ ալ
տուրքի ենթարկուեցան: Սակայն, տուրքին գործա-
գրման համար պարզ որոշմնագրէն զատ, որոշ հրա-
հանգ կամ կանոնագիր չըլլալուն, կարգ մը քաղաք-
ներու մէջ հողագործները, անասունի տէրերն ալ շա-
հատուրքի ենթարկուեցան, ինչ որ տեղի տուաւ բա-
զաքներու: 1313ին, Րուսէլիի հողագործները, հեռեւ-
եալ տարին ալ Ասիոյ երկրագործները, և յաջորդա-
բար անտոնարայծները, այգեգործները և պարտիզպան-
ները զերծ մնացին շահատուրքէն:

«Տասը տարի վերջը, շահատուրքի համար 22
Մարտ 1323 թուակիր կանոնագիր մը, և յետոյ տ-

առջին կանոնագիրը բարեփոխող 8 Դեկտ. 1323
Չրդ կանոնագիրը հրատարակուեցաւ:

«Այս կանոնագրին համաձայն, նահանգներու, գաւառներու ու քաղաքներու կեդրոններու մէջ ընդհանուր բնակչութիւնը երկու հազարէ աւելի եղող վայրերու մէջ գտնուող վաճառականները, արհեստաւորները սրոշ (մագրո՛ւ) և համեմատական (նիսպի) տնօրէնով երկու տեսակ շահատուրքի ենթարկուեցան:

«Սրոշ (մագրո՛ւ) բաժնին մէջ, շահերուն 0⁰ 3ը կանցնելու պայմանաւ շորս տօտիճանի բաժնուած ենթականերէն սուրքը կը գտնուէր: Իսկ երկրորդ բաժնին մէջ նախատեսուող վաճառատեղիներու և գործատեղիներու արձանագրուած արժէքին՝ հազարին հրեքը, առանձնաշնորհեալ ընկերութեանց պաշտօնականներուն տարեկան վարձքերուն — 36 սօկիէն աւելին — 0⁰ 3ը, կապալառուներու և յանձնառուներու մինչև տասը հազար սօկիի կապալագին (պիսիլը իլթիզամ), յանձնառագնին (պիսիլը քիհաիւս)ին 0⁰ ին տասը և տասր աւելին 0⁰ հն հինգը իբրեւ շահ նկատուելով, ըստ այնմ, տասնց 0⁰ հն երեքը շահատուրք կ'առնուէր:

«Սահմանագրութեան հռչակամբ, յիշեալ կանոնագիրներուն վրայ փոփոխութիւններ ներմուծելու քաղմաթիւ առաջարկներ եղան:

Ի վերջոյ, «Ելմական Բարենորոգչական Յանձնախումբ»ի նախագահութեամբ 1330ին առժամեայ օրէնք մը հրատարակուեցաւ: Չանաղան բարեփոխումներով ջարդ գործողութեան գրուած օրէնքը այս օրէնքն է:

«30 Նոյ. 1330 թուակիր յիշեալ առժամեայ օրէնքով, և յաւելուածներով, 25 Փետրուար 1330 և 3

Ապրիլ 1333 թուակիր առժամեայ օրէնքներուն հիմնա-
կէան էր, գրտերեւոյթէն և արտաքին փաստերու յեն-
լով շահը գուշակել և ասուրքը ըստ այնմ ճշդել: Վասն
զի, ենթականերուն իսկական շահերուն թափանցելու
անկարելիութիւնը կար:

«Մինչև այսօր արեւմտեան երկիրներու սմանց
կողմէ կիրարկուած յիշեալ գրութիւնը, երբեմն թէ-
պէտև իրականութեան կը մօտենայ, սակայն յաճախ
անիրաւութեանց ալ տեղի կ'ուտայ: Մասնաւորաբար
արտաքին երեւոյթներու յենլով ասուրք հաստատող
30 Ապրիլ 1330 թուակիր առժամեայ օրէնքը, գործա-
դրութեան մէջ շատ մը անիրաւութիւններու տեղի
տուած ըլլալուն, յաճախ փոփոխութեան ենթար-
կուած է:

«Սակայն, յաճախակի փոփոխութիւնները և սակի-
ու թղթադրամի տարբերութիւնը գործանելու համար
ասուրքին 5—10 անգամ յաւելումը, հանրութեան վրայ
աւելի ազդած և բողոքներու տեղի տուած է:

«Այս կացութիւնը, 1338ին Ազգ. Մեծ ժողովին
ուշադրութիւնը գրուած ըլլալով, կողմուկեցու ելմտա-
գէտ և փորձառու հինգ անդամներէ բաղկացեալ յանձ-
նախումբ մը, որպէս զի մշակէ օրէնք մը, որ շահե-
րու իսկական համեմատութիւնը գնահատէ, յասաջա-
տուական ասուրքի գրութեամբ շահու ասուրքը բարե-
փոխէ, և ժողովուրդին իրենց շահերուն գոնէ
1/10 5ը շանցնելու առաիճան հաւասարութիւն և արդա-
րութիւն երաշխաւորող ասուրքերու քանակը ճշդէ»:

Ահա այս մասնախումբը, տարիներու անխոնջ ու
աքնաջան աշխատութեամբ մէկ կողմէ իսկական շա-
հերու վրայ ասուրքի գրութիւնը հաստատած է, և միւս
կողմէ ալ, նկատելով որ արհեստաւորներու և վտնա-

առկաններու մեծամասնութիւնը օրինաւոր աստարներ
չունի, ստիպուած է բաւարարին զանց չընել նախկին
գրութիւնն ալ, որով արտաքին երեւոյթներու յեն-
լով ասուրքին քանակը կը ճշգուէր:

Արդի օրէնքը ջնջած է նաև պատերազմական
ասուրքի պէս յաւելումները, որ ասկէ առաջ, ամէն
տարի շահասուրքի վրայ 1/0 3 տւելի կը գանձուէր:

Գործադրութեան դրուած շահասուրքի օրէնքը
— զոր ստորև կը թարգմանենք —, բացի կարգ մը
օրինական ձեւականութիւններէ և պատժական արտ-
մագրութիւններէ, չորս գլխաւոր կէտեր կը պա-
րունակէ:

Ա.— Օրէնքէ բացառութիւն համարուողները, ու-
րոնք զերծ են շահու ասուրքէ:

Բ.— Յայտագիր (պէյաննամէ) տալու ստիպուած
ընկերութիւններ, վաճառականներ կամ արհեստաւոր-
ներ:

Գ.— Անոնք որ պարտաւոր չեն յայտագիր տալ:
(Այս առաջ փոքրիկ առեւարականներու մասին՝ թէև
յօդուածներու կարգին մեր ծանօթութիւնները պիտի
գրենք, սակայն անհրաժեշտ է շեշտել թէ, այս առ-
աջ արհեստաւորներ կամ վաճառորդներ, եթէ իրենց
համար՝ երեւոյթներէ գատելով դրուած ասուրքը չա-
փազանց ահօնեն, կրնան իրենց շահ ու փառք հաս-
տատող յայտագիր ներկայացնել: Այս պարագային,
իրենց ասուրքը կը գնահատուի արուելիք յայտագրին
վրայ: Բայց անգամ մը այս ձեւը որդեգրելէն յետոյ,
ստիպուած են ամէն տարի շարունակ յայտագիր ներ-
կայացնել:)

Դ.— Գործաւոր, կառապան, բօծեօր, շրջուն վա-
ճառորդ, նաւավար, բեռնակիր, փոքրիկ գործերու
յանձնառուներ, ևն. ի մասին որոշ արտմագրութիւններ:

ԲՈՒՆ ՕՐԷՆՔԸ

ՏՈՒՐՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՅՍՈՒՌԻԹԻՒՆՆԵՐԸ

Յօդուած 1. — Անհատական և բարոյական ամէն-
անձ, որ թուրքիոյ հանրապետութեան սահմաններուն
մէջ վաճառականութիւն կ'ընէ, արհեստով ու ար-
ուեստով կը զբաղի, և կամ այս օրէնքին մէջ նշա-
նակուած գործերով և ձեռնարկութեամբ կ'աշխատի,
ներկայ օրէնքով ճշգրտած պայմաններու համաձայն
շահատուրքի ենթակայ է:

Յօդ. 2. — Ստորեւ ցոյց տրուած անհատական և
բարոյական անձերը, զերծ են շահատուրքէ:

1) Հեղինակներ և թարգմանիչներ, գեղջկա-
կան գիշերային և աշկերաներու (չքրաֆ) վար-
ժարաններու ուսուցիչները միմիայն այս կերպ
զբաղուեալներուն համար:

ԵԱՆՕԹ. — «Հեղինակ» կ'ըսուի անոնց, որոնք հեղինակու-
թեան իրաւունքի օրէնքին (Հագրը թեկլիֆ գանոււնը) շրջ յօդ-
ուածին մէջ նշանակուած են: Արդ, օրաթերթերու մէջ երեւցած
գիտական ու ուսումնասիրական յօդուածներուն աէրը՝ հեղինակ
է և ո՛չ թէ խմբագիր: Այսինքն, այդ տեսակ գրութեան հեղի-
նակները, ինչպէս որ տուրքէ զերծ պիտի մնային իրենց գրու-
թիւնը գրքի ձեւով հրատարակելով, նոյնպէս զերծ կը նկատուին,
երբ յօդուածի ձեւով կը գրեն: Սակայն թերթին առօրեայ խմբ-
ագրականը կամ տրուած նիւթերու և քաղաքական տեսու-
թեանց վրայ գրող խմբագիր մը, իբրեւ լրագրող, ենթակայ է
շահատուրքի:

2) Այն բոլոր երկրագործները, որ հողային
բերքերը, ուր որ ալ ըլլան, առանց խանութ-
բանալու կը ծախեն, և կամ զանոնք կը քողեն
ու կը փոխադրեն:



3) Որսերնին՝ երկրորդ պարբերութեան համաձայն ծախող օրօրոցները և ձկնօրօնները (միջնօրոցները — մասրապագ, ենթակայ են) և ասոնց օրօրու և փոխադրելու միջոցները:

4) Իրենց անասունները և ասոնց օրօրութեան յատուկ նիւթերը, երկրորդ պարբերութեան համաձայն ծախողները և ասոնց՝ օրօրօգրման ու փոխադրման միջոցները:

5) Հողագործութեան մէջ գործածուած երկրագործները, վարձքով չգրադող ձկնօրօի նաւազները (թախճա), հովիւներ և անձնական ասուններու մէջ ասանին գործերով զբաղող սպասուորները:

ԾԱՆՈԹ.— Երկրագործութեան մէջ գործածուող ինքնաշարժ արօրներն — քրաֆթոր — այս պարբերութեան համաձայն, տուրքէ զերծ մնալու մասին, Այտընի երեսփ. Թահսին ղէյի առաջարկը Ազգ. Մեծ Ժողովին կողմէ ընդունուած է, պայմանաւ որ, արօրին տէրը նոյնինքն երկրագործը ըլլայ:

6) Այգեգործները ու պարտիզպանները (ասոնց միջնօրոցները — մատրապագ — զերծ չեն):

7) Երկրին մէջ ազգային և միջազգային հանգամանքով բացուած, առաւելագոյն մէկ տարիէն նուազ ժամանակի սը համար ցուցադրուող ցուցահանդէսներ, ասնավաճառներ (փանայր) և այդտեղ տպրանք ծախողներ (մի միայն հոն ծախածներնուն համար): Օտարահպատակները այս իրաւունքէն կարենալ օգտուելու համար, իրենց պատկանած կառավարութիւնը՝ Թուրքիոյ հետ փոխադարձ շահերու իրաւունքը ճանչցած ըլլալու է:

8) Առեւտրական բնօյթ չունեցող համագործակցականները (ֆոփերաթիւ):

ԾԱՆՈԹ.— Ելմտական գործավարին Ազգ. Մեծ Ժողովին մէջ տուած լուսարանութիւններէն կը հասկցուի թէ, համագործակ-

ցականները — որոնք ցարդ մ.թ. օրէնքներուն մէջ գոյութիւն չունէին — նոր առեւտրական օրէնքով ճանչցուած են: Համա- գործակցականները երեք տեսակի կրնան բաժնուիլ, — արտադրող, վարկի և սպառող: Հոս, օրէնքին մէջ ցոյց տրուածը երրորդ տե- սակն է և որուն իրրեւ օրինակ ըսուած է թէ, հովիւ մը իր ար- տադրած կաթէն, զոր օրինակ 100 քաշ կուտայ այդ համագոր- ծակցականին: Այս վերջինը, որ սկզբունքով սպառող է և ոչ թէ շահ արտադրող, այդ կաթէն պանիր կը շինէ և շինած պանիր- ներէն կաթին իրրեւ փոխարժէք 20 քաշ հովիւին կուտայ: Ահա՛ ասիկա, առեւտրական հանգամանքէն զուրկ է, ուրեմն, զերծ է նաև շահատուրքէ:

9) Բնակարաններու մէջ — առանց գործա- ւորի — քեզկեան դնելով ապածոյ բանօղներ:

ԾԱՆՈԹ.— Զոր օրինակ, գորգագործութեան, ուռկանի շի- նութեան պէս արհեստներ վերոյիշեալ պայմանաւ շահատուրքէ զերծ են,

10) Կին գայեակներ և հիւանդապահներ օր բնակչութիւնը հինգ հազարէն պակաս եղած վայ- րերուն մէջ ի գործ կը դնեն իրենց արհեստը:

11) Տարիքնին 18էն պակաս և 65էն աւելի, և կամ երկու աչքերը կոյր, և կամ կաթուածա- հար և կամ երկու ձեռքէ և ոտքէ և կամ առանց մէկէն զրկուած գործաւորներ, պաշտօնեաներ և շրջուն վաճառորդներ:

12) Հանգստեան թոշակաւորներ, օրբեր, և անօգնականներ, (առանք, միմիայն ամսական և ասրուստի օղութեան անուամբ ստացած գումար- ներէն շահատուրքի ենթակայ չեն:)

13) Մասնաւոր յիմարներու հիւանդանոց- ները, մասնաւոր թօքախաի դարմանատունները (սանաքորիում), մասնաւոր նախակրթարաններ, և այն միութիւնները (նեմիյեք) որոնց հանրութեան օգտին ծառայելը՝ պետութեան կողմէ հաստատ- ւուած է:

ԾԱՆՕԹ.— Ասոր մէջ, «մասնաւոր նախակրթարանները (խուսուսի իւք թէտրիսաթ մէքթէպլէրի) զերծ կացուցուած են շահատուրքէ: Իսկ, Յրդ 10դ. Տրդ պարբերութեան վերջընթեր մասին մէջ, «մասնաւոր վարժարաններու հիմնագիրները» ենթակայ բռնուած են և նոյնիսկ պարտաւոր են յայտագիր տալ: Ուրեմն, մեր ազգային վարժարանները — որոնք «մասնաւոր» նկատուած են — արդեօք այս Չրդ 10դ.ին 13րդ, թէ Յրդ 10դ.ւածին Քրդ պարբերութեան ենթակայ են: Ա. ելի լայն իմաստով, շահատուրքի ենթակայ են թէ ո՛չ:

Օրէնքին բացառութեան բաժնին մէջ ներմուծուած Չրդ 10դուածին 13րդ պարբերութեան համաձայն, նախակրթարանները զերծ են շահատուրքէ. իսկ բարձրագոյն, երկրորդական վարժարանները, թէեւ դուրս ձգուած են, սակայն ասոնք ալ ազգին օժանդակութեամբ հազիւ գոյութիւննին կը քաշքշեն: Որով վարժարանին համար շահատուրքի խնդիրը — նոյնիսկ յայտագիր տրուելու պարագային — գոյութիւն չի կրնար ունենալ:

14) Անոնք որ մասնաւոր օրէնքներով և կամ անթիւթեան հետ պայմանագրութեանց համաձայն՝ շահու տուրքի պարտաւորութենէն բացառութիւն կը կազմեն:

15) Ամէն տեսակ միութիւններու — որոնք տակաւորական նպատակ չունին — և քաղաքական կուսակցութեանց մուտքի դրամը և նուէրները:

16) Միջագոյն սովորութեանց և միջագոյն իրաւունքներու սկզբունքներու համաձայն, դեպքանները և օտար ներկայացուցիչները, հիւպատոսները և ասոնց քով աշխատող սւտեղական հպատակութիւն չունեցող պաշտօնեաները, (փախազարձ իրաւասութեամբ և իրենց այս հանգամանքներուն համար:

17) Յատկապէս պետութեան վերաբերեալ հաստատութիւններ և գործարաններ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Յայտագիր (պէյաննիանէ) տալու ստիպուած
եւթականեր եւ ասոնց վերաբերեալ
տուրքին նշոյններ:

Յօդ. 3.— Ստորեւ նշանակուած ենթակայները,
պարտաւոր են յայտագրով իմացնել իրենց շահերը:

1) Ինչ ո՛ր ալ ըլլայ իրենց գործելակերպը,
առեւտրական օրէնքին մէջ առեւտրական
ուած ընկերութիւնները և լիմիտըտ ընկերու-
թիւնները ու ասոնց մասնաճիւղերը:

ԾԱՆՅԹ.— Այժմու առեւտրական օրէնքին կողմէ նշանակ-
ուած ընկերութեանց տեսակները չորս են: 1. Մասնաւոր (խու-
սուսի) ընկերութիւններ, որոնք որոշ եւ մասնաւոր գործի մը հա-
մար կազմուած են: 2. Քոլլեկտիւ: 3. Քոմպանի: 4. Անանուէն ըն-
կերութիւններ: Նոր գործադրութեան գրուելիք առեւտրական
օրէնքը՝ նախատեսած է կարգ մը նորահասար ընկերութիւններ ևս,
սակայն ասոնք չեն կրնար ներկայ օրէնքին մէջ ներմուծուիլ:
Միայն, հոս չեղտուած է լիմիտըտ (սահմանափակ, կամ սահմա-
նաւորեալ) ընկերութիւնները, որոնք առեւտրական օրէնքին մէջ
չեն յիշուած, եւ մասնաւորաբար Անգլիոյ մէջ շափազանց տա-
րածուած են: Այս ընկերութիւնները, որ Թուրքիոյ մէջ ալ գոր-
ծուելութիւն ունին, ստիպուած են յայտագիր տալ:

2) Կեդրոնները օտար երկիրներու մէջ գը-
նուող ընդհանուր ընկերութեանց՝ Թուրքիոյ մէջ
գործող մասնաճիւղերը:

3) Դրամատուն, ապահովագրութիւն, փոխա-
տուութեան և փոխառութեան գործառնութիւն-
ները, քամպիոյի, դրամի, ադամանդի, և մեծա-
քանակ ապրանքի առեւտրով զբաղողները:

4) Ապրանք և կարասի պահելու յառուկ
մթերանոց (սեփօ, անթրրփօ) բանեցնողները:

5) Գրասենեակի տէր յանձնակատարներ,
միջնորդներ, յանձնառուներ, կապալառուներ,
կարասի փոխադրութեան միջնորդները (եմանքրնի):

6) Շօգենաւ և տարողութիւնը յիսուն թո-
նայէն աւելի ամէն տեսակ նաւեր բանեցնողներ,
ցամաքի վրայ կարասի և անձի փոխադրութեան
ծառայող ամէն տեսակ միջոցներ բանեցնող վա-
ճառատան տէրերը:

7) Թատրոն, սինէմա, պարտորան, նուա-
զահանդէս, և այլ զբօսական վայրեր, գոց և կամ-
բաց զուարճութեան, մրցումի, և օդափոխութեան
վայրեր, և պանդոկներ ու գարեջրատուն բանե-
ցնողներ:

8) Բժիշկներ, ասամնարոյժներ, անասնա-
բոյժներ, փաստաբաններ, երկրաչափներ, ճար-
տարագէտներ, գեղարանի տէրեր, նօտարներ և
նման գիտական և արհեստական ըմբանում-
ներով թէ՛ ասուներուն մէջ, և թէ՛ գարմանա-
տուն, գրասենեակ և աշխատանոց բանալով շահ-
ապահովող ազատ սպարէզի հետեւողները, թեր-
թի արտօնատէրները, տպարանատէրներ, մասնա-
նաւոր վարժարանի հիմնադիրները, և ամէն տե-
սակ ակուսմբներու հիմնադիրները:

ԾԱՆՕԹ.— Ի բաց առեալ Չրդ յօդուածին առաջին պարբե-
րութեան մէջ յիշուած աշկերաի (չրափ) վարժարաններու ու-
սուցիչներէն, միւս ընդհ. վարժարանի ուսուցիչները՝ իրենց ա-
ռած թոշակին համեմատ ենթակայ են շահատուրքի: Հետեւա-
բար, մասնաւոր վարժարանի հիմնադիրները, ըլլայ նախակրթա-
րանի, ըլլայ բարձրագոյն վարժարանի, ստիպուած են յայտագիր
տալ այս աւթիւ: Հոս պէտք է յիշել թէ, մասնաւոր ասուներու

մէջ դաս տուող ուսուցիչները անպայման պէտք է կրթական
Տնօրէնութեան վաւերացուած, և այս օրէնքին համաձայն ալ
արտօնագիր (ռուսաս քեզհրեսի) առած ըլլան: Հակառակ պա-
րագային, այդ տեսակ ուսուցիչները իրենց տան մէջ գործածող
տանտէրերը, և այդ ուսուցիչները, նոր հրատարակուած և 1 Յու-
լիս 1926էն գործադրութեան գրուած պատժական օրէնքին հա-
մաձայն, տուգանքի եւ ծանր պատիժի պիտի ենթարկուին:

9) Ծանուցումի, վարձակալութեան, առու-
ծախի, ճամբորդութեան գործերուն միջնորդող
գրասենեակի տէրերը, խաներ և փարթըմաններ
վարձելով ասոնք մաս առ մաս սւրիչներուն վար-
ձու առաջները, ամէն տեսակ բողոք բանեցնող-
ները:

10) Այն ընդհանուր վաճառականները, ինչ-
պէս նաև արհեստով և արուեստով զբաղողները,
որ վերայիշեալ պարբերութեան մէջ չեն նշանակ-
ուած, և սակայն իրենց գտնուած տեւորական
չէնքերուն՝ 14 Յունիս 1326 թուակիր կալուած-
ատուրքի օրէնքին (Մուսագգաթաք գանուեր)
համաձայն և 1331/1915 թուականէն առաջուան
վարձքերուն համեմատ գնահատուած խառն հա-
սոյթը (իրասը դայրը սաթի) տարեկան քառաս-
ուուն, և 1341/1925 թուականի վարձքերուն հա-
մեմատ ալ տարեկան 300 սօկիի կը հասնի:

1302 թուակիր կալուածական կանոնագրին (եմ-
լաֆ ցիգամնամեսի) գործադրուած վայրերուն մէջ,
այս խառն հասոյթները ճշգելու համար, 14 Յունիս
1326 թուակիր օրէնքին պէտք է գիմել: Միայն թէ,
հանրատուն բանեցնողները, իրենց շէնքին խառն հա-
սոյթը ինչ ալ ըլլայ, յայտագիր առլու ստիպուած չեն:

Յօդ. 4.— Յրդ յօդուածին մէջ նշանակուած շա-
հատուրքի ենթակաները իրենց շահը ներկայացնող

յայտագրէն զատ, պէտք է զատ յայտագիր վրն ալ
տան իրենց պաշտօնէութեան մասին. — մնայուն և
առժամայ ամէն կարգի անօրէն, պաշտօնեայ, աշխա-
տաւոր, գործաւոր, նաւապետ, նաւուն գլխաւորը
(րեխ), նաւազ ևն., տնտեսուն ընկերութիւններու
վարչական ժողովներու նախագահները, տնտեսները,
և բաժնեթուղթով ֆուանսիքներու մէջ հակակշար
մարմին կազմը:

Յայտագրին մէջ պէտք է յիշել տոնց տնտես-
ները, բնակավայրը, նիստի վարձքը, օւճիկ (քախսի-
սար), թոշակ, վարձք, առօրեայ վարձք, ապրուստի
ծախքերնին, ապրուստի ողութեան յաւելումը, մըր-
ցանակ, գրամական նուէր, բնակութեան վարձք, և
այլ գրածով փոխարինուելիք նիւթական օգուտներ:
Շահատուրքի ենթակայ չեղող քաղաքական կուսակ-
ցութիւնները և միութիւններն ալ, իրենց աշխատա-
ւորներուն համար նոյն ձեւով յայտագիր տալու պար-
տաւոր են:

Երբ զանազան մասնաճիւղեր օւնեցող առեւտրա-
կան և արհեստական հաստատութիւններ, քաղաքա-
կան կուսակցութիւններ և միութիւններ գտնուին,
իւրաքանչիւր մասնաճիւղը առանձին յայտագիր կու-
տայ: Առեւտրական և արհեստական հաստատութիւն-
ներուն վարչական կազմին համեմատ, կեդրոնէն ալ
կարելի է յայտագիր տալ:

Ներկայ յօդուածով նշանակուած աշխատաւորնե-
րուն մէջ, եթէ ելմական տարուայ միջոցին փոփո-
խութիւն ըլլայ, մինչև մէկ ամիս իմացնելու է:

ԾԱՆՕԹ. — Կրդ յօդուածէն յայտնի կ'ըլլայ որ, ենթակա-
ները երկու տեսակ յայտագիր տալու ստիպուած են: Առաջին
յայտագիրը իրենց շահն ու փաստը որոշող, իսկ երկրորդը իրենց

քով աշխատող թոշակաւոր և կամ օրական վարձքով գործաւորներուն ցանկը, մանրամասնութեամբ:

Այս յայտագրերուն տարբերութիւնը սա է որ, շահ ու վնասի համար տրուելիք յայտագրին հիմը պիտի կազմէ անցեալ տարուայ գործունէութիւնը: Զօր օրինակ, այս 1926 տարուան շահատուրքը որոշելու համար տրուելիք յայտագրին մէջ պիտի նշանակուին 1925 տարուան առուծախը, ելեւմուտքը, պահանջքը— պարտին: Իսկ աշխատաւորներու վարձքը, նուէրները ևն, ներկայացնող յայտագրին մէջ պիտի նշանակուին ո՛չ թէ անցեալ տարուայ տրուածները, այլ ներկայ տարուան մէջ տրուածները և տրուելիքները:

Յօդ. 5.— Պետութեան (նահանգ, գիւղաքաղաք նահիյի), թողապետութեան պիլիսիյի օնտուկներէն թոշակ և վարձ առնող պաշտօնեաները, աշխատաւորները, և առեւտրական հանգամանքով անօրինուող պաշտօնական հաստատութիւններուն վարչական ժողովի նախագահներն և անդամները, և կամ անօրէններ, պաշտօնեաներ, արհեստաւորներուն և գործաւորներուն համար յայտագիր չի տրուիք:

ԵԱՆՕԹ.— «Որո՞նք են այս պաշտօնական հաստատութիւնները՝ որոնք առեւտրական հանգամանքով կը տնօրինուին»: Այս հարցման պատասխանած է ելմտական գործավարը Ազգ. Մեծ Ժողովին մէջ, ըսելով թէ, «Սէյրի Սէֆաին» շոգենաւային ընկերութեան և երկրագործական գրամատան (Զըրաաթ Պանքասը) պէս հաստատութիւններն են:

ՅԱՅՏԱԳՐԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

Յօդ. 6.— Յայտագիրը՝ ելմտական տարւոյն տալին ամսուան միջոցին, օտայագրի մը փոխարէն, կը տրուի ենթակայ անձի շրջանին մէջ գտնուող ելմտական ճշդող (քեհագուգ) պաշտօնեային կը տրուի: Թղթատարի միջոցաւ ալ կրնայ դրկուել, պայմանաւ

որ՝ ստորագրութիւնը վերադարձնելի յանձնարարութեամբ (իստեկի քեահիւսի) արուի: Այս պարագային, թըղթատարին յանձնութեամբ թուականը՝ ելմտական ճշդող պաշտօնեային յանձնութեամբ կրնայ նկատուիլ: Անոնց որ առեւտրական տարին տոմարական տարւոյն չի յարմարիր, ներկայ օրէնքին գործադրութեան առաջին տարւոյն մէջ, պարտաւոր են իրենց յայտագիրները առեւտրական տարւոյն լրանալէն վերջը իրենց գործառնութիւնները տոմարական տարւոյն յարմարեցընել:

ԾԱՆՕԹ.— Տոմարական տարին կը սկսի Յունվ. մէկէն, որով մինչեւ Յունվարին վերջը յայտագիրները պէտք է տրուած ըլլան: Այս տարի, բացառաբար մինչեւ Մայիսին վերջը յայտագիրները պիտի տրուին: Իսկ, յայտագրի ենթակայ չեղողներուն ալ մինչեւ Մարտին վերջը տուրքերը ճշդուած պիտի ըլլան:

Յօդ. 7.— Յայտագիր առլու ստիպողականութիւն ունեցող գւրծերէն մէկուն ձեռնարկող տնտեսական կամ բարոյական տնձերը՝ միմիայն հետեւեալ ելմտական տարիէն սկսեալ յայտագիր պիտի տան: Այս գործերով զբաղողներն ալ եթէ ելմտական տարւոյն մէջ գործը ձգեն, կամ ուրիշին փոխանան, ձգած և փոխանցած թուականէն սկսեալ մինչև 15 օր, ամբողջ տարիէն պակաս մնացած շրջանին վերաբերեալ գործերուն եզրակացութիւնը յայտագրով մը իմացնելու են: Եթէ մեռնողներ կան, յայտագիրը ժառանգորդներուն կողմէ պարտաւորելով մինչև մէկ ամիս արուելու է:

Յօդ. 8.— Շահատուրքի ենթակայ եղող տնձր մէկ շէնքի կամ վայրի մէջ զանազան ձեռնարկութիւններէն յառաջ եկած շահերուն համար միայն մէկ, և զանազան շէնքերու մէջ իրարմէ անջատ ձեռնարկու-

Թիւններուն և մէկ կամ զանազան քաղաքներուն մէջ
զանուած մասնաճիւղերուն համար զատ զատ յայտա-
գիր պիտէ պատրաստէ. և իր զանուած վայրի ելման
կան պաշտօնատան պիտի տայ: Միայն թէ, այն հաս-
տատու թիւնները, որոնք մասնաճիւղերուն տարեկան
հաշիւները և հաշուեկշիռները կեդրոնի մէջ կը հա-
ւաքեն, միմիայն մէկ յայտագիր պատրաստելով՝ իրենց
գործերուն կեդրոնը եղող վայրին ելման պաշտօ-
նատունը կրնան տալ: այս պարագային, մասնաճիւ-
ղերը պայմանաժամին ստիպուած են իրենց պատկան-
եալ ելման պաշտօնատունները տեղեկացնելու թէ,
յայտագիրները իրենց կեդրոնին կողմէ ընդհանուր
հաստատութեան անուամբ պիտի արուին:

Յօդ. 9. — Անոնք որ պարտաւոր են յայտագիր
տալ և սակայն պայմանաժամին չեն տար, 22րդ յօդ-
ուածին համաձայն ճշգրտելիք և ստուգուելիք տուր-
քին կրկինը, կրկնութեան պարագային՝ չորս և եր-
րորդ անգամին՝ հնգապատիկը պիտի վճարեն: Միայն
թէ, 3րդ անգամուան յամառութեան վրայ, ելման
գործավարութիւնը, փխտանակ հինգ անգամ տուրքը
զանձելու, կրնայ տանց վճարի 6 ամիս փակել վաճա-
սատունը: Պաշտօնեաներու վերաբերեալ յայտագրին
չարուելէն յառաջ գալիք յաւելումները՝ այդ պաշտօն-
եաները գործածողէն կ'անուին, պայմանաւ որ ինքը՝
այդ յաւելման համար շահատուրքի ենթակայ եղող-
ներուն չկտրենայ դիմել: Սակայն, ասանկ պարագա-
ներու մէջ փակման սրոշումը չի գործադրուիր:

Ելման պաշտօնեաները, ելման տարուոյն
չըջանէն առաջ, պարտաւոր են 3րդ յօդուածին 10րդ
պարբերութեան մէջ յիշուած ենթականերուն տեղե-
կացնել թէ, յայտագիր տալու ստիպուած են: Հակա-

առկ պարագային, այս առաջին ենթակետերուն համար, պայմանաժամին յայտագիրը չառած ըլլալնուն տարա-
կութեամբ, ներկայ յօդուածին արամագրութիւնը չի
կրնար գործադրուիլ:

Յօդ. 10. — Յայտագիրերուն մէջ պէտք է գրուին,
ենթակային տնունը և բնակավայրը, զբողման առ-
առկը, խառն շահերուն գուժարը: Այս շահէն կը հան-
ուին այն գուժարները, որոնք յետագայ յօդուածնե-
րուն մէջ ցոյց կը արուին: Այս երկու գուժարներուն
միջև գոյանալիք տարբերութիւնը աուրքին քանակը
ճշգրտու կը ծառայէ:

Յօդ. 11. — Յոգ յօդուածին մէջ նշանակուած են-
թակետերէն անոնք որ օրինաւոր առեւտրական տո-
մարներ բռնելու և հաշուեկշիռ (պիլանչօ) պատրաս-
տելու պարտաւոր են, ինչպէս և նօտարները, վարժա-
րանները, օրաթերթի վարչութիւնները, իրենց աւելիք
յայտագրէն զատ՝ յարակից տարեկան հաշուեկշիռն
և շահ ու վնասի մանրամասն հաշիւները պարունակող
ցուցակ մըն ալ պիտի տան:

ԾԱՆՕԹ. — Այժմ գործադրութեան մէջ եղած առեւտրական
օրէնքին համաձայն, վաճառականները ստիպուած են հետեւեալ
3 տեսակ տոմարներ բռնել: 1. Օր Հաշիւ (Journal). 2. Նամակ-
ներու ընդօրինակութեան տոմար (Livre de copie des lettres):
3. Պիլանչօ, Livre d'inventaire (այսինքն հաշուեկշիռի տոմար):
Ասոնք պարտաւորիչ տոմարներ են (Livres obligatoires), զոր պէտք
է վաւերացնել տալ և թուրքերէնով բռնել: Իսկ ասոնցմէ գուրս-
կան կամաւոր տոմարներ (Livres facultatifs), զոր օրինակ, մայր
տոմար (Grand livre), սնտուկի տոմար (Livre de caisse), փոլի-
ցաի ձևատետրի տոմարներ են: որոնց վաւերացումը պարտա-
ւորիչ չէ:

Յօդ. 12. — Հաշուեկշիռին «պահանջք»ի կողմը՝ են-
թակային պատրաստ ապրանքը, մնայուն (սեմիրպաւս)
կարասիներուն արժէքը, գրամարկդին և գրամատանց

մէջ պահեաթի դրամները, զանազան պարտատէրերէն
 ունեցած պահանջքը, և «պարտի» ի կողմն ալ՝ դրամա-
 գլուխը, պահեաթի դրամները, զանազան պարտապա-
 հանջներուն ունեցած պարտքը կը նշանակուի: Ասոնց
 մէջ գտնուած տարբերութիւնը, շահ ու վնասի հաշ-
 ւոյն և շահ ու վնասի գումարներու մէջ տարբերու-
 թեան հաւասար կ'ըլլայ: Եթէ հաշուեկշռին պահանջքի
 ու պարտաթի կողմը աւելի ցոյա տայ, կը վճռէ թէ
 ենթակային տուեալ տարին շահով վերջացած է,
 իսկ եթէ պարտքի կողմը աւելի ըլլայ՝ վնասով վեր-
 ջացած է ու նկատուի:

ԾԱՆՕԹ.— Հաշուեկշռով ներկայացուելիք մանրամաս-
 նութիւնները, ներկայ 12րդ և յաջորդ 13—14րդ յօդուած-
 ներով ճշգրտած են: Հետեւաբար սխալ պիտի ըլլայ անշարժ-
 կալուածներու արժէքը հաշուեկշռին մէջ ներկայացնելի-
 ինչպէս կը թելադրուէր մասնագէտի մը կողմէ յօդուա-
 ծով մը ցոյց տրուած հաշուեկշռի օրինակին մէջ: Միայն
 թէ, յետագայ 13րդ յօդուածին վերջին պարբերութեան
 մէջ որոշապէս ըսուած է թէ՛ ո՞ր տեսակ կալուածին
 — իբրև վարձք — արժէքը պէտք է ներկայացուի:

Այս 12րդ յօդուածին մէջ՝ «զանազան պարտատէրերէ-
 ունեցած պահանջք» հարկ պիտի ըլլայ հաշուեկշռին մէջ
 գրել, և ըստ այնմ գումարին վրայ շահատուրք վճարել:
 Եթէ այդ պահանջք անգանձելի ըլլա՞յ:

Այս խնդիրը Ազգ. Մեծ Ժողովին վիճաբանութեան ա-
 ռարկալ եղած և սա եղբակացութեան յանգած է թէ, հաշ-
 ուեկշռին մէջ ո՛ր է պահանջք ցոյց տրուելու պարագային,
 անկարելի է տուրքէ խուսափիլ: Նոյն իսկ, այդ պա-
 հանջը եթէ մի քանի տարիներ շարունակ չգանձուի,
 տուրքի սակը անփոփոխ կը մնայ: Սակայն, հետեւեալ
 տարուոյ հաշուեկշռին մէջ, եթէ այդ պահանջք «անգան-
 ձելի» կամ «սնանկ» ցոյց տրուի, պէտք է «պարտի» ին-
 կողմն ալ հաւասարակշռել, և ըստ այնմ տուրքէ զերծ
 մնալ:

Յօդ. 13.— Շահ ու վնասի մանրամասն ցուցակին

մէջ, շահու կողմը պէտք է մտնրամանօրէն գրել են.
 թակային տակաբազան տաճարներուն՝ շահով գոց-
 աւած հաշիւներուն ամէն մէկ գոյանալիք խառն շա-
 հերը: Վնասի կողմն ալ պիտի գտնն յիշեալ տաճարնե-
 րուն մէջ վնասով գոցուած հաշիւներէն գոյացած
 վնասները և հաստատութեան բանեցնելիք ծախքը,
 վարձքերը, թոշակները և ասոնց մտնրամասնութիւն-
 ները, կալուածի վարձքերը, թղթակցութեան, ծա-
 ծուցումի (avis), նորագութեան, ապահովագրութեան,
 ամէն տեսակ պարտքերու տեղաները, և ներկայ օ-
 րէնքով առնուելիք տուրքէն դուրս, ենթակայիժ հաս-
 տատութեանը անուամբ գրուելիք ընդհանուր տուր-
 քերը, և ուրիշ ամբողջ ծախքերը: Երկու սիւնակնե-
 րու գումարներուն մէջ յառաջ գալիք տարբերութիւնը՝
 ենթակային դուռ շահը կամ վնասը պիտի ցուցնէ:
 Այս տարբերութիւնը, հաշուեկշռին մէջ ցոյց տրուած
 շահ կամ վնասին անպատճառ պէտք է հաւասար ըլ-
 լայ: «Այն շէնքը՝ որուն մէջ կը գտնուի ենթական,
 եթէ իր անձնական սեփականութիւնն է, վարձքին
 չափ ծախք մը պիտի կրնայ հաշուոյն մէջ անցընել:
 Այս պարագային ասոնց վերաբերեալ կալուածական
 տուրքը չի կրնար աւելցուիլ»:

Յօդ. 14. — Ենթական շահ ու վնասի հաշիւը պատ-
 րաստած տտեն, յետագայ կէտերը պէտք է նկատի
 առնէ:

1) Վնասի բաժնին մէջ չի կրնար անցընել իր
 անձին յատկացուած վարձքը, թոշակը և կամ
 եկանոտ (աիսար, revenu), ինչպէս նաև անական
 ծախքերը: Միայն թէ, ընկերութեանց մէջ
 ընկերներէն մէկը, իր դրած գրամագլուխէն դատ՝ եթէ
 ընկերութեան գործերուն մէջ ուրիշ պարտականու-

թիւն ստանձնած և ասոր փոխարէն եթէ իրեն թուշակ, վարձք կամ եկամուտ սահմանուած ըլլայ, սոսնք ընդհանուր ծախքերու մէջ կ'անցնին և վնասի հաշւոյն կ'արձանագրուին: Այսպիսիներուն առած գումարը պէտք է արձանագրուած ըլլայ պաշտօնեաներու յայտագրին մէջ:

2) Վնասի բաժնին մէջ նշանակուելիք amortissementը, ինչ ձեւով ալ ըլլայ, արուեստական և առեւտրական միջոցներու արժէքին $0/0$ 10ը չի կրնար անցնիլ:

Բաժնեթուղթով ընկերութեանց մէջ ընկերութեան վերաբերեալ արուեստական և առեւտրական միջոցներուն և անշարժ կալուածներուն amortissementի ծախքին համար, կառավարութեան կողմէ վաւերացուած կանոնադիրներուն մէջ նախատեսուած քանակը ընդունելի է: Միայն թէ, անշարժ կալուածներու մասին amortissementը եթէ հաշւոյն անցած ըլլայ, այդ պարագային վարձքի խնդիրը նկատի չառնուիր և այդ կալուածներուն տուրքերը ընդհանուր ծախքին մէջ կ'անցնին:

3) Ընկերութիւններէ զատ շահատուրքի ենթակայ եղողներուն կողմէ հասոյթէն զատուած պահեստի դրամը (fonds de réserve) նկատի չառնուիր: Այն ընկերութիւնները, որոնց ներքին կանոնադիրը, կառավարութենէն վաւերացուած է, կանոնադրին մէջ սահմանուած հասոյթներուն պահեստի դրամը զտակով, կրնան «պարտի» կողմը անցընել:

Ուրիշ ընկերութիւններուն զտակիք պահեստի դրամներն ալ, — ասրեկան $0/0$ ին հինգէն աւելի

չըլլալու և ընդհանուր գումարը դրամագլուխին
0/0ին 25ը չանցնելու պայմանաւ, — կ'ընդունուի
Անհատ ենթակառուցումը, պահեստի դրամա-
նունով հասոյթէն շահած գումարը, և ընկերու-
թիւններուն ալ՝ վերոգրեալ պարբերութեան մէջ
յիշուած քանակէն աւելի զատելիք պահեստի
դրամը շահ կը նկատուի և ըստ այնմ տուրք կը
գանձուի:

Նայնպէս երբ ընկերութիւնները, իրենց ի-
րաւասութեան սահմանին մէջ զատած պահեստի
դրամը, ինչ ձեւով որ ըլլայ, բաժնեատէրերուն կը
ցրուեն և կամ ընկերութիւնը հաշուեյարգարի
(liquidation) կ'ենթարկուի, նորէն տուրքը պիտի
գանձուի:

Մինչեւ օրէնքին հրատարակութիւնը հա-
ւաքուած պահեստի գումարները շահատուրքի են-
թակայ չեն: Ինչպէս նաև շահատուրքը արուե-
լով պահեստի դրամի վերածուած գումարներէն
յետագայ տարիներու մէջ այլեւս տուրք չանուիր:

4) Ներքին կանոնադիրները կառավարութենէ
վաւերացուած ընկերութիւնները, հաստատու-
թիւնները, վարչական ժողովի և գիտական պաշ-
տօնեաներու անուամբ, իրենց կանոնադրին արտ-
մագրութեան համաձայն զատելիք բաժինները
թէեւ հասոյթէն կը զեղչուին, սակայն այս ան-
ոսկ հաստատութիւնները 4րդ յօդուածին համա-
ձայն, իրենց կողմէ արուելիք պաշտօնեաներու
յայտագրին մէջ, ամէն մէկուն հանդիպելիք քա-
նակը նշանակելու ստիպուած են:

Ուրիշ ընկերութիւններ իրաւունք չունին
այս ձեւով դրամ զատել: Յետ քննութեան եթէ

հաստատուի թէ զատուած է, այդ տեսակ գու-
մարները ենթառն հաստի ի հաշուոյն կ'անցուին:

5) Մենաշնորհի տէր անտնուն ընկերութիւն-
ներն ալ կրնան տարեկան գուժար մը զտանել իբր
գրամագլուխի ամօրքիսրման, պայմանաւ որ այս
պարագան որոշակի գրուած ըլլայ իրենց կանո-
գրին մէջ, և պայմանագրութեան մէջ ալ յիշուած
ըլլայ թէ՛ պայմանատու լրանալուն, ընկերու-
թեան հիմնարկութիւնները պիտի փոխանցուին
պետութեան և կամ անոր կողմէ ընտրուած վար-
չութեան մը:

Յօդ.— 15—Յրդ յօդուածին ճրդ պարբերութեան
մէջ գրուած ազատ տապարէզի հետեւողներուն խառն
շահը, ըրած գործերուն փոխարէն իրենց առած գրամն
է: Ընդհանուր ծախքերն ալ հետեւեալներն են.—
պաշտօնեաներուն տրուած թոշակը, վարձքը, լուսա-
ւորութեան, ջեռուցման թղթակցութեան, ծանուցումի
ծախքերը, իրենց տրհեօտին վերաբերեալ կահ կորա-
օիներու տպահովագրութեան գրամը, և իրենց տր-
հեօտը կիրարկելու համար տնկրածեշտ ծախքերը:
Իրենց առած գրամէն ընդհանուր ծախքերը զեղչուելէ
յետոյ, երկու գուժարներու միջեւ եղած տարբերու-
թիւնը կը ցուցնէ իրենց զուտ շահը: Այս տեսակ
ենթակայները, ստիպուած չեն մասնաւոր հաշուեկշիռ
և շահ ու ու վնասի հաշիւ տալ:

Յօդ. 16.— Որպէս զի կարելի ըլլայ ստուգել
յայտագրերու պարունակութիւնը և յարակից փաս-
տաթուղթերը, ենթակայները ստիպուած են օրէնքով
պարտաւորիչ տոմարները նօտարին վաւերացնել աւլ,
թուրքերէն բռնել, և տոսնց անցնելիք տրձանագրու-
թեանց վերաբերեալ փաստաթուղթերը՝ ելմտական

տարիէն սկսեալ մինչև 3 տարի լաւ պայմաններու
առկ պահել և պահանջուելու պարագային ներկայա-
ցընել շահատուրքը ճշդելու պաշտօն ունեցողներուն:

Յայտագիր առէ յետոյ, ամար չներկայա-
ցընող և կամ ամար չբռնող, և կամ թէ փնտրու-
ած փաստաթուղթը ներկայացնելէ քաջուող
ենթականերուն շահերը՝ սղղակի կ'որոշուին, և
որոշուելիք տուրքերն ալ 0/0ին քսան համեմա-
տութեամբ կ'աւելցուին: Այս 0/0ին քսանը եթէ
պաշտօնեաներու յայտագրին վերաբերի, այն
պարագային, իրենց դիմելու իրաւունք չունե-
նալու պայմանաւ, պաշտօնեաները գործածողնե-
րէն կ'առնուի:

ԾԱՆՕԹ.— Այս յօդուածին մէջ 3 տարի միջոցը՝ կառավա-
րութեան առաջարկին մէջ 5 տարի ըսուած էր. բայց, Ազգ.
Մեծ Ժողովը Յի վերածած է. ինչպէս նաև 5 տարուան ժաման-
ցումն ալ, ասոր հետեւելով, Յի իջեցուցած է:

Նոյնպէս, երկրորդ պարբերութեան մէջ «պահանջուելիք
տեղեկութիւնները շտուողներ...» ըսուած էր, ինչ որ Ազգ. Մեծ
Ժողովի կողմէ ջնջուեցաւ:

Ուրեմն, յայտագիր տուողները, ստիպուած են վերոգրեալ
յօդուածներուն մէջ նշանակուած կէտերուն ուշի ուշով հետեւիլ՝
իսկ անոնք որ, յայտագիր տալու ստիպուած ըլլալով չեն
տուած, առաջին տարուան համար, ասոնց նկատմամբ առժամ-
եայ 71րդ յօդուածին արամադրութիւնը պիտի գործադրուի:

Յայտագիրներուն մէջ նշանակուած շահերուն
ֆնանդիւնը եւ տուրքին որոշելու ձեւը

Յօդ. 17.— Ելմտեկան տուրքիչ (թեհագուգ) պաշ-
տօնեաները, ամէն ելմտեկան տարւոյն երկրորդ ամ-
սոյ սկիզբէն մինչև մէկ շաբթսուան մէջ, պարտաւոր
են պատրաստել ցանկը անոնց որ ստիպուած ըլլալով

մէկտեղ յայտագիրը չեն տուած: Նայնպէս պիտի տու-
գին յաջորդաբար տրուած յայտագիրներուն ճշդու-
թիւնը:

Յայտագիրներուն մէջ նշանակուած շահերը, եթէ
յեա քննութեան պակաս չտեսնուին, տուրքին իբր
հիմ կ'ընդունուին:

Յօդ. 18.— Յայտագիրներուն քննութեան մի-
ջոցին, ստուգիչ պաշտօնեան, ենթականերէն հետեւ-
եալ խնդիրները կրնայ պահանջել:

1) Տուրքին ճշդման օգտակար ըլլալիք ամէն
տեսակ հաշիւները անձամբ և կամ պարզ նամա-
կաւ փոխանորդ կարգուած անձի մը միջոցաւ
ներկայացնել: Այս նամակին ստորագրութիւնը,
ենթակային առեւտրական ասպարէզի մէջ ծանօթ
ստորագրութիւնը պէտք է ըլլայ:

ԾԱՆՕԹ.— Ազգ. Մեծ Ժողովին վիճարանութեանց միջոցին,
եւմտական գործավարը յայտարարած է թէ, «վաճառականի մը
«սիրքիւլէն»ով յայտարարած ստորագրութիւնը ընդունելի է»:
Եթէ «սիրքիւլէր» չունենայ, ստիպուած է ստորագրութիւնը գտնել
Առեւտրական Սենեակէն վաւերացնել տալ: Ասիկա, նօտարէն
վաւերացուելու պէս աւելորդ ծախքերէն խնայելու համար եղած
է: Ուրեմն, մէկը եթէ հաշիւները անձամբ չկարենայ ներկայա-
ցնել, իր բարեկամին կամ խնդրոյն իրազեկ ո' և է անձի միջո-
ցաւ կրնայ ներկայացնել, պայմանաւ որ այդ անձը նամակով մը
ներկայանայ և այդ նամակին ալ «սիրքիւլէն»ը յարակից ըլլայ:

2) Պաշտօնատուներէն հարկ եղած տեղեկու-
թիւնը և փաստաթուղթերը տալ և զրկել:

3) Պարտականութիւնը դիւրացնելու ծառա-
յելիք տեղեկութեանց իրազեկ անձերէն՝ պէտք
եղած լուսաբանութիւնները ստանալ:

4) Դրամատուներէն, սակարաններէն, ընկե-
րութիւններէն, սակարանի գործիչներէն, և ընդ-

հանուր առմամբ ամէն տեսակ շահով զբաղողներուն պատկանեալ հաւաքական կազմերէն՝ իրենց պարտականութեան պահանջած տեղեկութիւնները ստանալ:

Ստուգիչ պաշտօնեաները, հրաւիրուելիք են թականերուն ներկայութեան, թէ առանձին և թէ ուրիշ պաշտօնեայ և մասնագէտներու մասնակցութեամբ, էքպերտներու կողմէ տեսուելիք ամէն տեսակ քննութիւնները կրնան կատարել: Ստուգիչ քննիչ պաշտօնեաները և ելմասկան քննիչներն ալ կրնան այս գործողութիւնը ընել:

Ենթական, գրաւորապէս իրեն զեկուցուած թուականէն մինչև 25 օրուան մէջ՝ պարտաւոր է պատասխանել իրեն եղած հարցումներուն:

Եթէ, օրինաւոր և ընգունելի պատճառներու բերմամբ, այս պայմանաժամին մէջ անկարելի ըլլայ պատասխանել, այդ պարագային՝ դործին կարեւորութեան համեմատ, խնդիրը տեղեկացնելու պայմանաւ, մինչև մէկ ամիս միջոց կրնայ արուել:

Պատասխան չառնողներուն յայտագիրները նկատի չեն առնուիր, շահերը ուղղակի պաշտօնեաներու կողմէ կը ճշգուսին, և տուրքերն ալ 0/0 50 համեմատութեամբ կ'աւելցուին:

Երկու տարուան մէջ կրկնութեան պարագային 10 սօկիէն մինչև 100 սօկի ա'լ տուգանք կ'առնուի:

Տոմարները և փաստաթուղթերը՝ վաճառատաններէն դուրս չեն կրնար հանուել:

ԾԱՆՕԹ.— Վերջ յիշեցինք թէ՛ առաջին տարուան համար եթէ յայտագիր չարուի, առժամեայ 1 արդ յօդուածին բովանդակութիւնը կը գործադրուի, որուն համաձայն, անցեալ տարուա շահատուրքին (բիւհրրիւ) 3 անգամք պիտի գանձուի,

Սակայն, անգամ մը յայտագիրը տրուելէն վերջը անոր պարունակութիւնը ճշդելու և պաշտօնեաները համոզելու համար, պահանջուած տեղեկութիւնները տալու, փաստաթուղթերը ներկայացնելու ստիպուած են: Ասոր համար ալ 15 օր աւելի միջոց տրուած է:

Կառավարութեան Ազգ. Մեծ Ժողովին ներկայացուցած ծրագրին մէջ, երկրորդ անգամ տրուելիք պայմանաժամին համար ալ 15 օր ըսուած է: Սակայն, դիտել տրուած է թէ, ընկերութեան կամ կարեւոր հաստատութեան մը գաւառները կամ դուրսը գտնուած մասնաճիւղերէն պահանջուած բացատրութիւնը ստանալու համար $1\frac{1}{2} + 1 =$ մէկ ամիս պայմանաժամը չի բաւեր: Որով, եղած առաջարկին վրայ, երկրորդը՝ մինչև մէկ ամիս ըսուած է:

Ստորագիշ պաշտօնեան կամ քննիչ ու հիսփիւրները, վաճառատան տոմարները կամ փաստաթուղթերը չեն կրնար դուրս հանել տալ կամ կառավարատուն ուղել: Վաճառականը դիւրութեան համար — եթէ փափաքի — կրնայ տանիլ և ներկայացնել զանոնք: Հակառակ պարագային, պաշտօնեան կամ հետաքրքրող պաշտօնական անձերը, ստիպուած են տոմարներուն, փաստաթուղթերուն գտնուած տեղը գալ և քննել:

Յօդ. 19. — Վերոգրեալ յօդուածին հակաձայն, յետ քննութեան եթէ ստուգուի որ շահը՝ յայտագրին մէջ ցոյց տրուած քանակէն մինչև $\frac{0}{10}$ 10 և կամ 1000 սօկի աւելի է, այս աւելին նկատի չառնուիր:

Հարիւրին տասնէն և կամ հազար սօկիէն աւելի ըլլալու պարագային, խնդիրը գրեւորապէս ենթակային կը զեկուցուի, և կ'ազգարարուի որ զեկուցման թուականէն մինչև 15 օրուան մէջ, ասոր վերաբերեալ բողոքը, գրաւոր կամ բերանացի ընել:

ԵԱՆՕԹ. — 19րդ յօդուածին մէջ կ'ըսուի. «պաշտօնեաներու քննութեամբ եթէ հասկցուի թէ հարիւրին 10 կամ մինչև հազար սօկի պակաս ցոյց տրուած է, այս գտնուած աւելին համար տուրք չառնուիր»: Ասիկա, բաւական մութ և շփոթ ըլլալուն, Ազգ. Մեծ Ժողովին մէջ ելմտական գործավարին տուած բացատրութենէն հասկցուած է թէ, տարբերութեան պարագային այդ

երկու հաւանականութիւններն ալ պէտք է հաւասարապէս նկատի առնել, հակառակ պարագային տուրքէ զերծ չի կրնար
ըլլալ:

Օրինակով խօսինք:

Ենթակային տուած յայտագրին մէջ 200 ոսկի գումար շահ
ցոյց տրուած է, ինչ որ տուրքին քանակը ճշդելու հիմք պիտի
ըլլայ: Յետ քննութեան հաստատուեցաւ թէ, 400 ոսկի շահ
ունեցած է: Այս 100 ոսկի տարբերութեան համար յետագայ
20րդ յօդուածը պիտի գործադրուի. այսինքն այդ դրամէն
տուրք պիտի առնուի: Այո՛, պիտի առնուի: Թէև գտնուած տար-
բերութիւնը 1000էն պակաս է, բայց հարիւրին 10էն աւելի ըլ-
լալուն, տուրքի ենթակայ է:

Ենթադրենք թէ, յայտագրով 15000 ոսկի շահ ցոյց տրուե-
ցաւ, քննութենէ վերջն ալ հաստատուեցաւ թէ, 16100 ոսկի է:
Գտնուած 1100 ոսկի տարբերութիւնը՝ թէև հարիւրին 10ի հա-
մեմատութեամբ պակաս է, (հարիւրին 10էն 1500 ոսկի պէտք
էր ըլլար, մինչդեռ 1100 գտնուած է), սակայն օրէնքին մատ-
նանշած 1000 ոսկիէն աւելի ըլլալուն, տուրքէ զերծ չի կրնար
ըլլալ:

19րդ յօդուածին համաձայն, որպէս զի քննութեան արդիւն-
քէն գոյանալիք աւելին տուրքէն զերծ մնայ, պէտք է թէ հա-
րիւրին տասնէն և թէ 1000 ոսկիէն պակաս ըլլայ. — մէկը միւսը
կը լրացնէ:

Զօր օրինակ, յայտագրով 1500 ոսկի շահ ցոյց տրուած է:
Քննութեամբ 15999 ոսկի գտնուած ըլլալով, այս 999 ոսկի ա-
ւելիի տարբերութենէն տուրք չառնուիր. վասն զի, թէ հարիւրին
10=1500էն և թէ օրէնքին նշանակած 1000 ոսկիէն պակաս է:

Յօդ. 20.— Եթէ ենթական պատասխան չտայ, և
կամ անոր պատասխանը համոզիչ չըլլայ, աւ հաս-
կըցուի թէ, ճշմարտութեան հակառակ տրուած պա-
տասխաններով կ'օւզէ մասամբ ազատիլ տուրքէ, այդ
պարագային գտնուած տարբերութեան համար օրօշ-
ուելիք տուրքը կրկինը ըլլալով կը գանձուի:

Եթէ, ենթակային այդ պատասխանը՝ օրէնքին
նրբութիւններուն չթափանցելէն յառաջ եկած է, և

առաջը պակասեցնելու պէս յոռի գիտումներ գոյութիւն ունեցած չեն, այդ պարագային յիշեալ տարրերութիւնը առանց յաւելումի՝ օրոշեալ առաջին կը բարդուի:

ԾԱՆՕԹ.— Այս յօդուածին մէջ յիշուած «յոռի գիտումը» գնահատելու իրաւասութիւնը ստուգիչ պաշտօնեային (Թէհագ-գուգ մէկմուրը) ձգուած է:

Յօդ.-21.— Եթէ, ենթակային ներկայացուցած յայտագրէն աւելի շահ օրոշուած ըլլայ, և ենթական իրեն զեկրուցուած այս առաջին չհամոզուելով բարձրագոյն մարմինն դիմած ըլլայ, ստուգիչ պաշտօնեաները, պարտաւոր են ներկայացնել աւելի շահ նշանակելու պատճառ եղող ապացոյցները:

Յօդ. 22.— Եթէ հետեւեալ պատճառներով անկարելի ըլլայ համոզիչ փաստերով ենթակային զուտ շահը ճշգրտել, այդ պարագային ուղղակի աբսալյութ և վարչական քննութեամբ ու հաւասար գործակիցներու բողոքամամբ (եմսալիցե գրյասեց) կ'օրոշուի զուտ շահը: Այդ պատճառներն են.— Յայտագիրը օրոշ պայմանաժամին չի արուիր, և կամ արուած յայտագրին մէջ միայն խառն հասոյթը ցոյց կը արուի, իսկ զուտ շահը որոշող արձանագրութիւններ չեն ներկայացուիր: Եւ կամ, զուտ շահը ցոյց կը արուի իսկ բուն շահը հաստատելու համար անհրաժեշտ արձանագրութիւններն ու առմարները չեն ներկայացուիր:

Եթէ հաւասար գործակիցներ չգտնուին, այդ պարագային ուղղակի պաշտօնեան կը գնահատէ: Ստուգիչ պաշտօնեաները, ստիպուած են ենթակային զեկուցանել գնահատման ապացոյցները:

Ստուգիչ պաշտօնեաները, այս պարագաներու մէջ ենթակային հաշիւները իրենց տեղը քննելու ստիպ-

աւած չեն, այլ, եթէ օգտակար գտան, կրնան բա-
ցատրութիւններ պահանջել:

ԾԱՆՕԹ.— 16 և 22րդ յօդուածներուն մէջ, կառավարու-
թրագրով «... պահանջուած բացատրութիւնները չտալէն...»
պարբերութիւնը Ազգ. Մեծ Ժողովը ջնջած է:

Յօդ. 23. — Պաշտօնեաներու և սպասարկողներու
մասին տրուած յայտագրերուն ստուգութիւնը, տօնը
վերաբերեալ արձանագրութեանց քննութեամբ կը
հաստատուի:

Քննութենէն վերջը՝ եթէ հաստատուի թէ գաղտնի
պահուածներ կան, որով պետական գանձուն իրա-
ւունքները սանտկոխ պիտի ըլլան, այդ պարագային,
պահուածներուն քանակին համեմատ առնուելիք տուր-
քը, առաջին անգամուան համար՝ 5 անգամ աւելիով
կը գանձուի:

Երկու տարուան միջոցին եթէ կրկնուելու ըլլայ,
5 անգամէն զատ, 10 սօկիէն մինչև 100 սօկի ալ
տուգանք կ'առնուի:

Այս ձեւով գանձուած բացառիկ 4 անգամը և դրա-
մական տուգանքը կը պաշտօնի պաշտօնեաներու գոր-
ծակալին, պայմանաւ որ գործատէրը այդ գրամը իր
պաշտօնեաներէն չուզէ:

ԾԱՆՕԹ.— Յայտագրին մէջ պակաս ցոյց տրուած պաշտօն-
եայ կամ սպասարկողներուն տուրքին մէկ անգամը իրենցմէ, և
4 անգամը ու կրկնութեան պարագային տուգանքն ալ միասին
փաքուններէն կ'առնուի:

Ուրեմն, ամէն մէկ ընկերութիւն, հաստատութիւն, վաճա-
ռատուն ստիպուած է իր պաշտօնեաներուն ճշգրիտ ցանկը և ա-
ւած օրավարձքին, ամսականին ևն ի քանակը ներկայացնել:

Յօդուածին մէջ «սպասարկող» (միւսքախիսի) ըսուած է:
Արդ, կը գտնուին այնպիսի հաստատութիւններ որոնցմէ գործա-
ւորը՝ օրական կամ շաբաթական գործ առնելով տունը կ'աշ-
խատի, և գործի գլուխ վարձք մը կ'առնէ: Զոր օրինակ, դերձա-

Կատուներ կան, ուր գործաւորը առած կտորին համաձայն աշ-
խատութեան վարձք կ'առնէ: Ասիկա «սպասարկող» է, և այս
գիր տալու ստիպուած են թէ ո՛չ:

Այս տեսակ գործաւորներու կամ սպասարկողներու մասին
ներկայ օրէնքին 31—34րդ յօդուածներուն մէջ մասնաւոր տրա-
մադրութիւններ կան: Հետեւաբար, այս յօդուածին մէջ յիշուած
«սպասարկող» բառը անոնց մասին չի կրնար գործադրուիլ: «Սպա-
սարկող» անոնք են՝ որոնք մնայուն կերպով հաստատութեան
կամ վաճառատան կապուած են, և անոնց հաշւոյն որոշ վարձ-
քով կ'աշխատին, ինչպէս դռնապաններ, պահապաններ ևն:

ՏՈՒՐՔԻՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 24. — Նախորդ յօդուածներու համաձայն, և
4րդ ու 5րդ յօդուածներով յիշուած պաշտօնեաներէն
և սպասարկողներէն զտա, ներկայացուած, քննուած և
կամ ուղղակի պաշտօնապէս (րէէտէն) հաստատուածնե-
րուն շահերէն հետեւեալ համեմատութեամբ տուրք կը
դանձուի. —

Մինչեւ	3000	ոսկի	եղողներէն	%ից	6
3001էն	մինչև	5000	(5,000ը մէջը)	%ին	7
5001էն	»	6000	(6,000ը »)	%ին	8
6001էն	»	8000	(8,000ը »)	%ին	9
8001էն	»	10,000	(10,000ը »)	%ին	10
10001էն	»	20,000	(20,000ը »)	%ին	11
20001էն	»	30,000	(30,000ը »)	%ին	12
30001էն	»	50,000	(10,000ը »)	%ին	13
50000էն	ոսկիէն աւելի			%ին	14

ԾԱՆՕԹ. — Յրանսայի մէջ, շահու վրայ %ին 8, իսկ թո-
շակներէն, վարձքերէն %ին 6 կառնուի: Յունաստանի մէջ ալ,
շահէն %ին 6, և ամսականներէն ու վարձքերէն %ին 4:

Յօդ. 25. — Տէրութեան, կուսակալութեան, գիւ-
ղաքաղաքներու (նահիէ) և քաղաքապետութեան օրն.

տուկներէն՝ մատուցողան և կամ մտրմնական աշխատութեան փոխարէն թոշակ, ամսական, վարձք և օրական առնողներէն, տրուած քանակութեան վրայ 0/0ին 3 շահատուրք կ'առնուի: Տէրութեան, կամ անհատներու յատուկ ընդհանուր առեւտրական հաստատութեանց և և արհեստանոցներու մէջ աշխատողներէն, ամսական առած գումարէն մինչև հարիւր սեկի առնողներէն 0/0ին 4ը, և 300 սեկիէն աւելի առնողներէն՝ աւելիին համար՝ հարիւրին 5 շահատուրք կ'առնուի:

Յօդ. 26. — Բաժնեթուղթերով ընկերութիւններու մէջ, տուրքին համեմատութիւնը զուտ շահուն ընդհանուր գումարին վրայ չի հաշուուիր: Այլ, իրենց կանոնադիրներուն համաձայն բաժնուելէ վերջը, ամէն մէկ բաժնետէրին տրուելիք քանակութեան վրայ տուրք կ'որոշուի և կը գանձուի:

ԾԱՆՕԹ.— Այս յօդուածին մէջ ցոյց տրուած տարբերութիւնը մասնաւոր նշանակութիւն ունի: Ընկերութեան զուտ շահէն, իրենց կանոնադիրն համաձայն որոշ պահեստի գրամ են. զեղջուելէն վերջն է որ բաժնետէրերուն կը տրուի:

Արդ, եթէ շահատուրքը զուտ շահէն առնուած ըլլայ, բաժնետէրերուն ձեռքը չանցնելիք գրամներէն ալ շահատուրք առնուած պիտի ըլլայ. որով յիշեալ յօդուածով կառավարութիւնը շատ իրաւամբ և արդարացի կերպով այս փափուկ կէտը նկատի առած է:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Յայտագրի ենթակայ շեղողները եւ ասոնց վերաբերեալ տուրքը ճշդելու եղանակը

Յօդ. 27. — Այն առեւտրականները և արհեստ-
ւորները որ շէնքի մը մէջ առեւտուրով և ար-
հեստով կը զբաղին, ու Յրդ յօդուածին համաձայն,
յայտագիր տալու պարտականութենէն զերծ են, ի-
րենց վաճառատան տարեկան իրական վարձքերուն
համեմատ տուրքի կ'ենթարկուին:

Իրական վարձքերը՝ նօտարէն վաւերացուած
վարձակալութեան պայմանագիրներուն մէջ ցոյց տրու-
ած վարձքի գումարներն են:

Եթէ ենթակաները չկարենան վաւերացուած պայ-
մանագրութիւն ներկայացնել և կամ պայմանագրու-
թեան մէջ ցոյց տրուած քանակը բացայայտօրէն ճշ-
մարտութեան հակառակ ըլլայ, այդ վարձքի գումարը,
մօտակայ նման վայրերու բազմաթիւութեամբ, և ի հար-
կին եփսփրեաներ կարծիքին գիծելով, ստուգիչ պաշ-
տօնեաներու կողմէ կ'որոշուի և կը ստուգուի:

Իրական վարձքերը, ժամէն պարագայի տակ կալ-
ուածատուրքի օրէնքին (մուսագգաճաք գանունը)
գործադրուած վայրերու մէջ, 1332 (1915) թուական-
կանէն առջուտն վարձքերուն համեմատ գնահատեալ
(մուխամմեհ) խառն հասոյթներուն (իրասը կայրը
սաճի) 7 տնգամէն, և 1341 (1925) թուականին վարձ-
քերուն համեմատ գնահատեալ խառն հասոյթներուն
մէկ տնգամէն պակաս չեն կրնար ըլլալ:

Կալուածական կանոնագրին (եմլաֆ Գիգամնամեսի) գործադրուած վայրերուն մէջ, յիշեալ խառն հաւոյթները, 14 Յունիս 1326 թուակիր օրէնքին համաձայն կ'որոշուին:

(Մանօթ.— Իբրեւ նախարան մեր տեսութեան մէջ ըսած էինք թէ, Վասա վարութիւնը նկատելով որ արհեստաւորներու ու վաճառականներու մեծամասնութիւնը օրինաւոր ասմարներ չունի, օտիպուած է բողոքովին զանց չընել նախկին դրութիւնն ալ, որով որոշեցին երեւոյթներու յենլով ասուրքին քանակը կը ճշգուէր:)

Ահա, վերողրեալ և յետագայ յօգուածները այդ իմաստով գրուած են: Իսկական շահուն վրայ չէ որ ասուրքը կը ճշգուէր, այլ պարզապէս դրեւերեւոյթէն գտակով և վաճառատան վարձքէն գնահատելով ասուրքը կ'առնուի:

Այս տեսակ ենթակաները, եթէ տեսնեն թէ վարձքի վրայ գնահատուած ասուրքը համապատասխան չէ իրեն շահուն, որով իրաւունքնին օտնակոխ կ'ըլլալ կամ կը վնասուին, կրնան յայտագրի ձեւը ընդունիլ, և շահերնին յայտագրով մը ներկայացնել և փաստել:

Սակայն անգամ մը այդ ձեւը ընդգրկելէ յետոյ, օտիպուած են ամէն տարի իրենց յայտագիրը ներկայացնել, և հակառակ պարագային, յայտագիր չտուողներու մասին օրէնքին արամադրած խտութեան հանգսւրժել (Յօդ. 29):

Յօդ. 28.— Վերայիշեալ յօգուածին համաձայն ենթակայ եզօղներէն հեռուեալ համեմատութեամբ ասուրք կ'առնուի.—

1) Ամէն տեսակ փոխադրութեան յատկաց-

ուլած նաւատուն (գայրգխանէ), ախոս, կառատուն
 (արապալրգ), կառած, և նման վայրերը բանե-
 ցնողները, սպասուոր և գործուոր հայթայթող
 հաստատութեան տէրերը, հողաման-պատկ (չա-
 նախ-չհովիք) ծախողները, ծախուելիք հաց չհա-
 նելով՝ բացառապէս եփելու գործով (փիօրիճիլիք)
 գրողող փոսպաններ, իրենց իրական վարձքերուն
 0/0ին քսանին չափ շահատուրք պիտի վճարեն:

2) Այլն տեսակ նորոգողներ, թիթեղագործ-
 ներ, խոհարարներ, արճեփներ, երկաթագործներ,
 տաաղձագործներ: ամբողջի պէս փոքր արհես-
 տուորներ, իրական վարձքերուն 0/0ին 25ը:

3) Նպարավաճառի, մսավաճառի, բանջարա-
 վաճառի, պաղպաղակի և տժխավաճառի պէս
 ապրանքներ ծախող փոքրիկ առևտրականներ, և
 փանսիօններ, իրական վարձքերուն 0/0ին 30ը:

4) Հանրատուն բանեցնողներ, իրական վարձ-
 քերուն 0/0ին 75ի համեմատութեամբ տուրքի կ'են-
 թարկուին:

Իրենց նմաններուն տեսուրին և արհես-
 տին բողբոսամար տուրքի կ'ենթարկուին ա-
 նոնք, որ տուրքի ենթակայ են և սակայն իրենց
 գործին տեսակն ու տուրքին համեմատութիւնը
 չէ նշանակուած օրէնքին մէջ:

Յօդ. 29. — Նախորդ յօդուածին մէջ ցոյց արուած
 ենթակաները, մինչև Յունուարի վերջը, իրենց պատ-
 կանած ստուգիչ պաշտօնաւան (քհնազգուգ իսարեսի)
 գրաւոր դիմելով կրնան յայտարարել թէ կ'ուզեն
 յաջորդ տարի յայտագրի գրութեամբ տուրքի են-
 թարկուիլ: Այս պարագային, այս տեսակ առևտրա-
 կաններու և արհեստաւորներու մասին ո՛ր և է տուրք

դնելէ առաջ, պիտի ապաստուի որ իր նմանները յայ-
տաագիր ներկայացնեն: Որոշ պայմանաժամին յայտա-
գիր չափազանցու նկատմամբ, առաջին մասին մէջ
նշանակուած արամադրութիւնները կը գործադրուին:

Անգամ մը յայտագիր ասուողները անկէ յետոյ
այս գրութիւնը գործադրելէ չեն կրնար հրատարիլ:

Յօդ. 30.— 27րդ յօդուածին մէջ նշանակուած են
թուկաներէն՝ եթէ ելմասկան տարւոյն մէջ գործերն ին-
ձգած և փոխանցածներ կան, ելմասկան տարւոյ
օկիզրէն մինչև առեւտուրն ին և արհեստն ին ձգելու
թուկանը անցած ժամանակին համար իրենցմէ ու-
րիչ շահատուրք չառնուիր, պայմանաւ որ եղելութիւ-
նը մինչև մէկ տմիս ասուգրիչ պաշտօնատան տեղե-
կացնեն և անցեալ ելմասկան տարւոյն աուգուած
տուրքերն ին ամբողջութեամբ վճարած ըլլան: Մտն-
ուածն պարագային ժառանգորդներու կողմէ եթէ տե-
ղեկութիւն արուի և վճարումը ըլլայ, միևնոյն ձեւը
կը կիրարկուի:

(Մանօր. — Այս 30րդ յօդուածին շուրջ, Ա.զ.գ. Մեծ
Ժողովին մէջ բաւական վիճարանութենէ վերջը, յօդ-
ուածը յանձնաժողովին յղուած, և առաջարկուած ձե-
ւին վրայ «անցեալ» բառը աւելցուելով ընդունուած է:

Վիճարանութեան շարժառիթը հետեւեալն է.—
այն արհեստաւորը որ ելմասկան տարւոյն օկիզրէն՝
ամբողջ արուան շահատուրքը վճարած, և քիչ ասե-
նէն խանութը գոցած է, «կրկին շահատուրքի ենթա-
կայ չէ» կ'ըսէ յօդուածը. որով իմաստը բաւական ան-
հասկնալի թուած է:

Ելմասկան գործավարին տուած բացատրութենէն
հասկցուած է թէ, «ենթադրենք որ, 1926ի Յունիսին
գործա շարունակեցի: 1926ի համար յայտագրի ենթա-

կայ եմ: Ասիկա տուի և 925ի համար որոշ ասկ վր
 (մարտահ) ցուցուցի: Երկու ամսուան գործունէու-
 թեանո համար 1926ի տուրքն ալ տուի: Արդէն այդ
 տարւոյ համար սուրիչ շահատուրք չմնաց: Եկանք
 1227ին: 1926ի մէջ գործո շարունակած եմ, և 1927ի
 Յունիսէն առաջ ալ վաճառատունս դոցեցի:

Քանի որ ամէն ենթակայ 1928ի համար՝ 1927ի
 ընդհանուր գործունէութեան վրայ յայտագիր պիտի
 առայ, 1927ի համար ալ, ենթակայ չըլլալով հանդերձ,
 1926ի մէջ ըրած գործունէութեան վրայ յայտագիր
 պիտի ներկայացնէ:

Արդ, վերոյիշեալ 39րդ յօդուած կ'ըսէ թէ,
 1926ին մէկ երկու ամիս զբաղած, տուրքն ալ տուած,
 և գործին փոխանցուամբ եւլն. տեղեկացուցած ըլլալէն
 վերջը՝ այլեւս այդ մարդը 1926ի գործերուն համար
 1927ի յատուկ յայտագիր առլու պարտականութիւն
 չունենար:

Պէտք է գիտնալ թէ, ամէն ենթակայ ելմտական
 տարին թեւեօխելուն պէս, ամբողջ այդ տար-
 ուան տուրքը աալու ստիպուած է: Գործին մէկ ամ-
 սիսէն ձգելը, փոխանցելը, կամ մահուամբ վաճառ-
 տան գոցուիլը՝ կացութիւնը չի փոխեր:

Եթէ եղած փոփոխութիւնը ստուգիչ պաշտօնեա-
 ներուն չհաղորդուի, կամ ամբողջ տարուան տուրքը
 միանուագ չվճարուի, ենթական՝ հակառակ գործը ձգած
 ըլլալուն, ստիպուած պիտի ըլլայ յաջորդ տարուան տուր-
 քէն ալ պտտափախտաւ մնալ: Մահուան պարագային,
 ժառագարդները իր տեղը կ'անցնին. ժառանգարդները
 պարտաւոր են մահը կամ այդ առթիւ սեւէ փոփո-
 խութիւն տեղեկացնել պտականեալ մարմնին և
 տուրքը վճարել:

Յօդ. 31.— Հետեւեալ տնձերը, իրենց մէկ օր-
ուան խառն շարին առանտպատիկին չափ շահատուրք
պիտի վճարեն.— Անոնք որ մասնաւոր գրասենեակ
կամ գործատեղի չունին, և սակայն ցամաքի, ծովու
և լիճերու վրայ ամէն տեսակ փոխադրութեան մի-
ջոցներ կը գործածեն: Այս տեսակ տնձերուն օրտէան
չափը պիտի գնահատուի տեղական նաւահանգիստնե-
րու վարչութեան և կամ թաղապետութեանց կողմէ,
և նկատի պիտի առնուին ենթակային գանձած տեղը
(քաղաք, նահանգ, գիւղ եւլն.), գործածուած փոխա-
դրութեան միջոցին տեսակը (օմնիպիւս, օթօպիւս,
օթօմօպիլ, կառք, բեռնակառք եւլն.), ինչպէս նաև
ուրիշ պարագաներ:

Ծովային փոխադրութեանց միջոցներէն ցարդ առ-
նուած ամսական տուրքը, և մինչև հարիւր թօնօ
նաւերուն անցատուրքերը (միւրիւրիյէ բեսմիւրի)
ջնջուած են:

Ծանօթ.— Տուրքը՝ անասուններու, կառքերու և
նաւերու տիրոջ կը պատկանի: Փոխադրութեանց մէջ
թոշակով, ամսականով աշխատողներու մասին՝ յետա-
գայ 32րդ յօդուածին արամադրութիւնը կը կիրառ-
ուի:

Վերագրեալ 31րդ յօդուածով ցոյց արուած աշ-
խատութեանց մէջ՝ եթէ շահաբաժինով աշխատողներ
կան, ընկեր կը համարուին:

Զորօրինակ, ձկնորսներու մէջ սովորութիւններ
կան, որոնց համեմատ աշխատաւորները— թէպէտև
ուսկան նաև և կամ նաևակ չունին— սակայն, որս
սացուած ձուկերէն բաժին կ'առնեն: Անոնք ընկեր
կը համարուին, և իրենց առած բաժիններուն համե-
մատ շահատուրքի կ'ենթարկուին):

Յօդ. 32. — Նախորդ յօդուածին մէջ նշանակուած միջոցները, եթէ վարձկաններով բռնեցօին, ասոնց արուեստին հմտութեան աստիճանը նկատի հ'առնուի, նայելով թէ բարձրագոյն վարժարանէն վկայեալ են և կամ թէ վկայական չունին: Եթէ վկայեալ են, ամէն մէկ մասնաճիւղի մասնագիտութեան համար զատ զատ շահատուրք կ'առնուի. իսկ վկայական չունեցողները իրենց մէկ օրուան շահուն աստիճանով պիտի վճարեն իբր շահատուրք: Ելմական իշխանութիւնները պիտի ճշդեն թէ՛ վկայական չունեցողները ո՞ր դասին կը պատկանին, այօինքն գործապետ են (իւպաւի), վարպետ արհեստաւօր (ուսրա իտի) թէ պարզ արհեստաւոր:

Վարձկանները (եհիրլեր) իրենց տիրոջ ասիմանուելիք տուրքին համար պատասխանատու են:

(Ծանօթ. — Այս յօդուածին մէջ, գործաւորներու կամ վարձկաններու աստիճանին գնահատումը՝ իրենց օրավարձին քանակը ճշդելու դիւրութեան համար է:

Ելմական վարչութեան կողմէ և ՅՅԵ արուած միջոցներով ըլլալիք դատաւարումը՝ անշուշտ գործնական կեանքին մէջ չի կրնար ազդեցութիւն ունենալ:

Վարձկաններն ալ՝ իրենց տիրոջ համար նշանակուելիք տուրքէն — փոխադարձ երաշխաւորութեամբ — պատասխանատու են:

31րդ յօդուածին մէջ ՅՅԵ արուած շահատուրքին ճշդումէն յետոյ, այդ դուժարը գանձելու համար, ելմական պաշտօնեաները կրնան օւղղակի ենթական հետապնդել, կամ իր գործածել տաւած կառքը, նաւը և անասունը գրաւել, և կամ վարձկանը ներդ գնելով գրամը գանձել):

Յօդ. 33. — Երթեւեկութեան յատկացուած վայ-

րերու, նաւահանգիստներու, շուկաներու մէջ շրջուն վիճակի մէջ գործող ամէն տեսակ արհեստաւորներ, միջնորդներ, հաւաքիչներ, վաճառորդներ, իրենց կարողութեան համեմատ ստուգիչ պաշտօնատանց կողմէ գնահատուելու պայմանաւ, վկայեալ չեղողներու կարգէն մէկուն մէջ նշանակուելով, տանց մասին նախորդ յոգսւածին համեմատ որոշուած մէկ օրուան շահուն տասն տնգամը պիտի վճարեն իբր շահատուրք:

Յօդ. 34. — Հետեւեալ անձերը, իրենց մէկ օրուան շահին հինգ տնգամը իբր շահատուրք պիտի վճարեն. — անոնք որ իրենց տուներուն մէջ կ'աշխատին, և կամ յայտագիր տալու պարտաւոր չըլլալով մէկտեղ, սրօշ, ամսական և կամ օրական վարձքի սը փոխարէն կը բանին խանութի, վաճառատան, արհեստանոցի և կամ ցամաքային եւ ծովային փոխադրութեանց միջոցներու մէջ: Այս տեսակ արհեստաւորները, Յ1րդ յօդուածով ցոյց տրուած վկայեալ չեղողներու կարգերէն մէկուն մէջ պիտի գտնուին, և ըստ այնմ պիտի որոշուի իրենց օրական շահը:

Յօդ. 35. — Տուրքին ճշդման գործողութիւնը պայմանաժամին տեղի կ'ունենայ: Նաւահանգիստի և թաղապետութեանց վարչութիւնները պարտաւոր են մինչեւ ելմտական տարիին յաջորդող Յունուարի վերջը կատարել արհեստաւորներուն օրականներուն ճշդումը, և արդիւնքը տեղեկագրել ելմտական ամենաբարձր պաշտօնեաներուն:

Յօդ. 36. — Ամէն ելմտական տարւոյ համար, անոր յաջորդող տարւոյն Փետրուարի սկիզբէն սկսեալ մէկ ամսուան մէջ լմննալու պայմանաւ, ստուգիչ պաշտօնեաները իրենց պաշտօնավարութեան շրջանին մէջ, այս բաժնին վերաբերեալ շահատուրքի ենթականե-

բուն ընդհանուր ցուցակագրութիւնը պիտի ընեն, և ոչ-չրջուն առեւտուրով ու արհեստով զբաղողներու խանութներուն այդ առուան իրական վարձքը պիտի ճշդեն, համաձայն 27րդ յօդուածին:

Շրջուն վաճառարդներու և արհեստաւորներու քննութեան գործողութիւնը, ի հարկին պատկանեալ նաւահանգստի և կամ թողապետական վարչութիւններէն առնուելիք տեղեկութեան համեմատ կը կատարուի:

Ստուգիչ պաշտօնատուները (թեհագոլզ իսարկ-լերի) մինչեւ Մարտի վերջը տուրքերու գնահատման և ճշդման գործողութեանց վերջ տալու ստիպուած են:

(Ծանօթ.— Օրէնքին ցարդ ցոյց տուած բացառութիւններէն հասկցուեցաւ թէ, որոշ պայմանաժամին յայտագիր տալու պարտականութիւնը տուրքին քանակը ճշտելու համար սակի մը (մաթրահ) ձեռք ձգելու պէտքէն յառաջ եկած է: Յայտագիրը հիմը պիտի ըլլայ տուրքին քանակին որոշման: Եթէ զուտ շահ կայ՝ որոշ յառաջատուական տուրքի պիտի ենթարկուի:

Ասկէ վերջը, իրերայաջորդ տարիներու համար, այս ձեւին գործադրութիւնը զգալիօրէն կը դիւրանայ, ինչ որ տուրքին գնահատման եղանակին մասին ցարդ կիրարկուած օրէնքներէն աւելի արդարութեան մօտ է, և ընդհ. քաղաքակիրթ երկիրներու կիրարկած գրութեան լաւագոյն ձեւն է:

Սակայն, սկզբնաւորութեան մէջ կրնան պատահիլ շատ մը դժուարութիւններ, որոնցմէ մաս մը նախատեսած է օրէնագիրը: Զոր օրինակ, ներկայ օրէնօքով, վաւերացեալ տոմարներու պարտագրութիւնը կայ, ուրկէ բխած արձանագրութիւնները կրնան լաւագոյն ապացոյցը ըլլալ ի նպաստ ենթակային: Մինչ-

դեռ այս գրութիւնը մինչև հիմա գոյութիւն չունէր։ Արդ, ներկայ օրէնքը գործադրութեան պիտի դրուի 1 Յունիս 1926ին։ Տրուելիք յայտագրերը պիտի բովանդակեն անցեալ տարուան գործունէութեան արդիւնքը, շահն ու վնասը։

Ուրեմն, ենթական անցեալ տարուան յայտագիրը աւելով, այդ պարագային չպիտի կրնայ պարունակութիւնը հաստատել, փոփոխել. քանի որ օրինակար տար և փոփոխութիւններ կը պակասին իր քով։

Թէեւ հրատարակի վրայ պարկեշտութեամբ ու վստահութեամբ քիչ շատ դիրքի տէր առեւտրականներու պատուախնայութենէն պէտք չէ կասկածիլ, բայց այս տեսակ արժանապատւութեանց դպելիք կասկածանքին առաջը առնելու համար, օրէնսդիրք քուէարկած է 71րդ աւժամեայ յօդուածը, որով այս տարուան համար յայտագիր աւելու դժուարութիւն կամ անկարելիութիւն ունեցողները, կրնան անցեալ տարուան թիմերիւն 3 անգամը վճարել և խնդիրը փակել։

Միայն թէ, հոս կ'ուզէինք մտանունչել ուրիշ անպատեհութիւն մը, զոր ներկայ օրէնքը որոշապէս չէ ճշդած։

Ենթադրենք թէ, յայտագրի ենթակայ մէկը, ներկայ օրէնքին գործադրութեան թուականը եղող Յունիս մէկին գործի ձեռնարկեց, 1926ի շահատուրքին սակը որոշելու համար, 1925ի գործունէութեան հաշուեկշիռը պիտի պահանջենք։ Նոր գործի ձեռնարկած ըլլալուն համար, բնական է որ օրէնքին տրամադրութիւնը չի կրնար ամբողջացնել։

Ուրեմն, 1926ի աւերքին համար ճշգրտան եղանակը ինչ պիտի ըլլայ։

Կը կարծենք թէ, այս տեսակ սկսնակներու մասին ալ 22րդ յօդուածին արամադրութիւնը պիտի գործադրուի:

Ամէն պարագայի տակ, ենթադրական գործողութիւններու տեղի չառաջ համար, լուսագոյն միջոցն է յօդուածով մը կամ հրահանգով մը, այս կէտն ալ ճշգրտել ու բացատրել:)

ԶԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտօնութեան եւ կամ անուան (իւնիան) պաշտօնագրերը

Յօդ. 37. — Ներկայ օրէնքին համաձայն, պաշտօնեաներէ և սպասարկողներէ զատ, շահատուրքի ենթակայ անհատական և բարոյական ամէն անձ — կ'ուզէ առաջին կ'ուզէ երկրորդ մասին մէջ գտնուի — ստիպուած է արտօնութեան (րուխսաք) և կամ անուան պաշտօնագիր (թեզիք) տունել: Ասոնց համար արգիլուած է առանց պաշտօնագրի տուած ընել և արհեստը ի գործ դնել:

Տարուոյն մէջ առեւտուրի և արհեստագործութեան սկսած այս տեսակ ենթակայներն ալ, գործի սկսելէն մինչև մէկ տարի ստիպուած են գործերնին պատկանեալ ելմտական վարչութեանց գրաւոր տեղեկացնել և արտօնութեան կամ անուան պաշտօնագիր տունել:

Այս պաշտօնագիրները ամէն տարի կը նորոգուին, և միայն մէկ ելմտական տարուոյ համար ընդունելի են:

Ասոնցմէ զտրու մնացած ենթակայները, արտօ-

նութեան և անուան պաշտօնագրի ենթակայ չեն :

(Մանօր.— Այս և յետագայ յօդուածներու մէջ, կառավարութեան ծրագրով՝ «միայն «արտօնագիր» (րուխսաք քեզեքեսի) բռնած էր :

Ազգ. Մեծ Ժողովի վիճարանութեանց ընթացքին, Գօլտօյ բժիշկ երեսփոխանը դիտել առած է թէ, բժիշկները և կառավարութեան հակակշարին ենթակայ նման ազատ առարկէզի հետեւողներ, արդէն պատկանեալ մարմիններէն պաշտօնական արտօնութիւն ունին : Հետեւաբար, անոնց կրկին արտօնագրի պարտականութիւն մը չեղան՝ աւելորդ է : Սակայն, նկատելով որ խնդրին էութիւնը՝ ենթակային ելմտական պաշտօնատան դիմումի պարտագրութիւնն է, ուստի յարմար դատուեցաւ «արտօնութեան» վրայ «անուան» (իւնվան) բառը աւելցնել :

Յօդ. 38.— Արտօնութեան և կամ անուան պաշտօնագրերուն վարձքն է .

- 1) Գործաւորի համար 25 դրշ :
- 2) Շրջուն վաճառորդներու և շրջուն արհեստաւորներու ու արուեւտաւորներու համար կէս օսկի :
- 3) Յայտագրի ենթակայ չեղող և վաճառատուն կամ արհեստանոց ունեցողներու համար 1 օսկի :
- 4) Յայտագրի ենթակայ եղող ազատ առարկէզի հետեւողներուն համար 2 օսկի :
- 5) Յայտագրի ենթակայ վաճառատան և արհեստանոցի տէրերուն համար 5 օսկի :

Մանօր.— Վերոգրեալ յօդուածին մէջ յիշուած պաշտօնագրերու փոխարժէքը, շահատուրքի գումարին հետ առնչութիւն չունի :

Յօդ. 39.— Արտօնութեան կամ անուան պաշտօ-

գիրը, ելմասկան տարւոյն երկրորդ ամսուան սկիզբը
տանելու է: Տարւոյն մէջ գործի ձեռնարկողներն ալ
սկսած թուականէն մինչեւ երկրորդ ամսուան սկիզբը
տանելու և պաշտօնական ծախքն ալ տուած ըլլալու են:

Զեկուցում եւ բողոք

Յօդ. 40. — Առաջին մասին մէջ գտնուող ենթա-
կաներուն տուգուած տուրքերը՝ մինչև Յունիսի վեր-
ջը, իսկ երկրորդ մասին մէջ գտնուող ենթականերուն
դրուած տուրքերը՝ ելմասկան տարւոյն յաջորդող
տարւոյն Մարտին վերջը, ելմասկան պաշտօնեանե-
կողմէ զեկուցագրով մը ենթականերուն կը հաղոր-
գուին: Ենթական, եթէ պաշտօնեայ կամ սպասարկող
է, իր փաքօնին կը հաղորդէ զեկուցագիրը:

Յօդ. 41. — Ենթականին յղուելիք ամէն տեսակ
զեկուցում, և ենթականէն ըլլալիք ամէն կերպ բո-
ղոքներ՝ միշտ ենթականին պատկանած ելմասկան
պաշտօնեաներու և կամ տուգիչ պաշտօնատան (քե-
հագգուգ իսարեսի) միջոցաւ կը կատարուին:

Յօդ. 42. — Ենթակաները, ելմասկան պաշտօնեա-
ներու զեկուցագիրներու յղման թուականէն սկսեալ
(պաշտօնական օրերը չհաշուելու պայմանաւ) երեսուն
օրուան մէջ կրնան բողոքել նշանակուած տուրքին
քանակին դէմ և քննութիւն պահանջել:

Բողոքագիրները, առանց դրոշմաթուղթի և ընկա-
լագրի փոխարէն կը տրուին: Վերադարձնելի յանձ-
նարարուած թղթատարով ալ կրնան դրկուել: Այս-
պարագային, թղթատարին յանձման թուականը,
տուգիչ պաշտօնատուն յանձնուած թուականը կը հա-
մարուի:

Յօդ. 43. — Բողոքագիրներու մէջ, բողոքի շար-

ժամիթը կտրուկ և հասկնալի պէտք է ըլլայ:

Ենթական, նախնական բողոքի մասին որոշում տրուելէ առաջ, կրնայ Չրդ և Յրդ բողոքագիրը ալ տալ:

Միայն թէ, եթէ յանձման թուականէն հասկցուի որ այդ բողոքագիրը որոշման թուականէն վերջը աւրուած է, այլեւս անլսելի կը մնայ: Ի հարկին կարելի է վճարեկ ատենանին գիմել և բեկանել տալ բողոքի յանձնաժողովի տուած որոշումներն իսկ, պայմանաւ որ առարկութիւնը օրինական ըլլայ:

Յօդ. 44. — Ստուգիչ պաշտօնեաները, եկած բողոքագիրները և յարակից թուղթերը, թուականի կարգաւ և ի հարկին իրենց ծանօթութիւններն ալ տւելցնելով — և այս պարագային իր ծանօթութեան մէկ օրինակը առաւելագոյն 5 օրուայ միջոցին բողոքարկուին յղելու պայմանաւ — պահարանի մը մէջ դնելով կը կնքեն և տեղւոյն տնէնէն բարձր ելմասկան պաշտօնեային կը յանձնեն, ընկալագրի փոխարէն: Բողոքագիրներուն վրայի ծանօթութեան յաւելումներու օրինակն ալ, առաւելագոյն հինգ օրուան մէջ սւղղակի բողոքարկուներուն կը յղեն:

Յօդ. 45. — Բողոքները քննող յանձնաժողովը կը բաղկանայ երեք անձէ. — մէկ նախագահ և երկու անդամ: Նախագահն է՝ տեղւոյն քաղաքային (միլիի) տնէնէն բարձր պաշտօնատարը և կամ անոր ընտրած անձը: Իսկ անդամներէն մէկը կ'ընտրուի Ասեւարական Սենեակէն և կամ թողապետարանի կողմէ, եթէ Ասեւարական Սենեակ չկայ խնդրոյ առարկայ վայրին մէջ: Երրորդ անձը կ'ընտրուի առեւտրականներէ և արհեստավարներէ, պայմանաւ որ ենթականերու զբաղմունքին տեղեակ և հաշուագէտ ըլլայ:

Առեւտրական սենեակները և կամ թողապետութիւնները, տարեգլխուն ամէն ճիւղի յատուկ հաշուագէտ անձերու ջանկ մը կը ներկայացնեն ելմական վարչութեանց, որպէս զի անոր վրայէն բողոքի յանձնաժողովներու համար անդամներ զատուին:

Առաջին մասի ենթականերուն բողոքները կը քննուին Յուլիս 20ին, իսկ երկրորդ մասի ենթականերուն բողոքներն ալ՝ Ապրիլ 20ին:

Ի հարկին կարելի է աւելցնել բողոքները քննող յանձնաժողովներուն թիւը, նկատի առնելով տեղական պահանջները: Ելմական գործավարութիւնը նիւտ գլուխ որոշ վարձք մը կուտայ յանձնաժողովին նախագահին և անդամներուն:

Յօդ. 46. — Բողոքները քննող յանձնաժողովը իր քննութիւնը կը կատարէ, նկատի առնելով յարակից թուղթերն ու փաստաթուղթերը, ինչպէս նաև բողոք քերկուին աւելիք բացատրութիւնները: Ի հարկին, իր անդամներէն մէկուն փոխանորդութեամբ ու անոր պատասխանատուութեան ներքև երդուեալ եխփեր՝ երու միջոցաւ տեղւոյն վրայ կը քննէ առաջին մասին մէջ նշանակուած ենթականերուն արձանագրութիւններն ու առեւտրական տոմարները, և կամ ուրիշ յարմար դատած ձեւի մը կը հետեւի, և ի դէպ պարագային ենթական և ուրիշ իրողեկներն ալ հրաւիրելով կ'ունենցրէ: Գլուխ երկրորդ մասին մէջ նշանակուած ենթականերուն, անոնց ալ վարձքը տեղւոյն վրայ կը գնահատէ և կամ զանազան միջոցներով անոնց համար գնահատուած շահերը հաստատելով կը քննէ և որոշ պատահաւորանութեան յենլով կ'ամբողջացնէ:

Երբ յանձնաժողովը համազուտ գոյացնէ թէ՛ ենթական մերժած է կատարել յայտագիր աւելու պար-

առօրու թիւնը, և առօր համար ըստ 22րդ յօդուածին տրամադրութեան, անոր շահը իր նմաններուն յարմարցուելու ձեւով գնահատուած է, այլևս պէտք չունի հաշիւները քննելու: Իսկ երբ բողոք տեղի ունենայ, այն տեան միայն կը քննուի թէ նմանութիւն կա՞յ բողոքարկուին և այն անձին հետ, որուն յարմարցուած է անոր շահատուրքը: Ի հարկին աւելի յարմար նմանի մը կը պատշաճեցուի բողոքարկուին դիրքը:

Եթէ ելմտական պաշտօնեան պարզ գնահատուածով ճշդած է ենթակային տուրքին քանակը, երբ կարելի էր աստիճանակցի մը յարմարցնելով կատարել այդ գործը, և կամ գնահատութեան մէջ սխալմունք տեղի ունեցած է, քննիչ յանձնաժողովը կրնայ ուզուել սխալը և աստիճանակցի մը յարմարցնելով ճշդել տուրքին չափը:

Քննութեան համար տեղի ունեցած ծախքը, անիրաւ կողմէն գանձուելու պայմանաւ, ելմտական գանձէն կանխիկ կը վճարուի:

Քննութեան համար կայացած օրոշման՝ տուրքին պակասեցնելու կամ աւելցնելու վերաբերեալ մասը, զեկուցագրին մէջ ալ ամփոփ կը գրուի, և որուած օրոշումները պատկանեալ պաշտօնատան կը ղրկուին, ենթականերուն զեկուցուելու համար:

Բողոքները քննող յանձնախումբերու օրոշումներուն արձանագրութեան տուրքը՝ մտքով անդամներուն կողմէ, և ենթակային զեկուցուելիք օրոշումներուն նախագահին կողմէ կը ստորագրուի, և յանձնախումբին պաշտօնական կնիքովը կը կնքուի:

(Ծանօթ. — Կառավարութեան կողմէ ներկայացուած օրէնքին մէջ՝ «եփսփեւերու քննութիւնը եթէ



ենթակային կողմէ պահանջուի, ծախքն ալ ինքը տալու ստիպուած է՝ պարբերութիւնը ջնջուած է:

Այս յօդուածէն կը հասկցուի թէ, յայտագիրը չտուող կամ փաստաթուղթ չներկայացնող ենթակայներու համար, պաշտօնեաները նախ ստիպուած են աստիճանակիցներ փնտռել: Զոր օրինակ, ոսկերիչ յը՝ բրուն վաճառատան վարձքը տարեկան 300 սակի կամ աւելի է, եթէ օրէնքին պարտադրած տրամադրութիւնները չգործադրէ, պաշտօնեան՝ անոր գիրքին, կացութեան և գործունէութեան հաւասար ուրիշ ոսկերիչներ պիտի փնտռէ և անոնց վճարած պարտքին չափ դրամ պիտի պահանջէ յայտագիրը չտուող ոսկերիչէն: Ապա թէ ո՛չ նախ քան նմանութիւն փնտռել, ինքը չի կրնար գնահատել:

Եթէ նմանութիւն չգտնուի, այն ատեն պաշտօնեան ինքը կը գնահատէ: Սակայն այս գնահատումն ալ չափաւոր պէտք է ըլլայ: Եթէ սխալմունք կամ թերութիւն մը եղած ըլլայ, ահա վերագրեալ յօդուածին համեմատ բողոքելու և բողոքը քննող մարմնին նկատածան յանձնելու է խնդիրը: Այս վերջինն ալ, անիկա դարձանելու իրաւասու է ներկայ յօդուածով:)

Յօդ. 47. — Զեկուցագիրներու մէջ նշանակուած տուրքը կը գանձուի, երբ բողոքի պայմանաժամը անցած է: Իսկ եթէ բողոք տեղի ունեցած է, բողոքները քննող յանձնախումբին օրոչմամբ միայն կը գանձուի:

Վաճարեկ Ատեանի մօտ կատարուած դիմումը չի կրնար տուրքին գանձումը յետաձգել:

Յօդ. 48. — Ա. մասին ենթակայները, երբ ատենին յայտագիրը չտան և կամ ասմար չներկայացնեն, ստուգիչ պաշտօնատան կողմէ սուղակի հաստատուած շահերուն

վրայ, ասուրքի յաւելում կատարուի: Բողոքները քննող
 յանձնաժողովը, իր կողմէ գնահատուելիք ասուրքի ք-
 նակին համեմատութեամբ միայն կրնայ փոխել այս
 յաւելումը: Իսկ երբ ելմասկան պաշտօնեային կողմէ
 բողոք տեղի ունենայ, կրնայ մերժել ստուգիչ պաշ-
 տօնեային 20րդ յօդուածին համաձայն նշանակած յա-
 ւելումը, և կամ անոր չըբած յաւելումը աւելցնել:

Յօդ. 49. — Բողոքները քննող յանձնախումբը,
 առաջին մասին ենթականերուն վերաբերեալ պար-
 ասկանաւթիւնը՝ երկու ամիսէն, և երկրորդ մասին
 ենթականերուն վերաբերեալ պարասկանութիւնը՝
 ելմասկան տարւոյն յաջորդող Մայիսի վերջը աւար-
 տելու ստիպուած է:

Երբ յանձնաժողովին նախագահը և ելմասկան
 պաշտօնեան (մալ մեմուրի) ժամանակին չկատարեն ի-
 րենց պարասկանութիւնը, ելմասկան գործավարը
 իրաւասու է պարասկանութեան մէջ թերացումի
 յանցանքով պատասխանատու բանելու զանոնք:

(Ծանօթ. — Այս և նախորդ յօդուածներու մէջ
 յիշուած առաջին մասի և երկրորդ մասի նշանա-
 կութիւնը, ներկայ օրէնքին առաջին և երկրորդ մա-
 սերուն մէջ ակնարկուած ենթականերուն համար է)

Յօդ. 50. — Թէ՛ ենթակաները և թէ՛ ելմասկան
 գանձուն անուամբ ելմասկան պաշտօնեաները զե-
 կուցման թուականէն, և չբողոքուելու պարագային՝
 քաղաքի համար որոշ պայմանաժամրն անցնելէն սկը-
 եալ սւթը օրուան մէջ կրնան վճարեկ տեւանին գի-
 մել և բողոքել քննիչ յանձնաժողովի որոշման դէմ:

Միայն թէ, այս տեսակ գիմուսին շարժառիթը,
 պէտք է վերաբերի մասնաւորաբար օրինական ձեւե-
 րու թերացման, կամ օրէնքին որոշ արամագրութեանց

զանցառութեան և 43րդ յօդուածին վերջին պարբերութեան: Գնահատութեան վերաբերեալ խնդիրները չեն կրնար ազդել և տուրքին գանձման արդելք ըլլալ:

(Մանօր. — 22րդ և այլ նման յօդուածներուն համաձայն գնահատուած տուրքին համար, վճարեկ տաւանին կատարուած գիմուսը չի կրնար ունէ օգուտ ըլլանալ, ինչպէս կը հասկցուի ա, ս յօդուածէն: Նոյնպէս ունէ ձեւի ներքէ վճարեկ տաւանին կատարուած գիմուսը, չի կրնար յետաձգել առ տուրքին գանձուսը):

Յօդ. 51. — Ստուգիչ պաշտօնեաները, վճարեկ տաւանին յղուելիք բողոքագիրները, յանձնուած թուականէն մինչև 3 օր պարտաւոր են ելման կան գործարարութեան մէջ կազմուած վճարեկ տաւանին դրկել: Յապաղման պարագային պատասխանատու են:

Յօդ. 52. — Ելման գործարարութիւնը կերտողներին մէջ և պէտք եղած տեղը վճարեկ տաւանը կը կազմէ: Ատաւանին նախագահը պէտք է ըլլայ այնպիսի անձ որ, որ ելման կամ գատական գործարար մէջ բարձր դիրք զբաւած է, անպաշտօն է և չէզոք: Ան դամներն ալ չորս են. երկուքը՝ ելման կան, երկուքն ալ տուարական գործարարութեան պաշտօնեաներէն և կամ գուրտէն կ'ընտրուին: Ի հարկին կարելի է մէկէ աւելի վճարեկ տաւաններ կազմել: Նախագահին և ան դամներուն նիստ գլուխ առնելիք վարձքերը կը վճարուին ելման գործարարութեան կողմէ:

Յօդ. 53. — վճարեկ տաւանը իր քննութիւններուն կը օգտի հետեւեալ թուականներուն. — Ա. մասին մէջ նշանակուած ենթականերուն համար՝ Դեկտեմբերին, և Բ. մասին մէջ նշանակուածներուն համար ալ

Յուզիո ամսոյ մէջ: Ամէն մէկ մասին վերաբերեալ
խնդիրները, պարտաւոր է մինչեւ վեց ամիս աւար-
տել:

Ատեանին այն անդամները, որ որոշ պայմանաժամին
չեն վերջացներ իրենց պարտականութիւնը, յաջորդ
եւմտական տարւոյ մէջ նայն պաշտօնին չեն կոչուիր:

Յօդ. 54. — Վճարեկ տեանը եթէ բեկանէ բո-
ղոքի տարկոյ որոշումը, բեկանման պատճառաւ
նսւթեամբ միասին թղթածրարը կը վերադարձնէ բո-
ղոքները քննող պատկանեալ յանձնախումբին: Այս
վերջինն ալ՝ պարտաւոր է ընդունիլ բեկանման որո-
շումը, և անոր համաձայն լրացնել թերի նկատուած
մասերը: Յետոյ թղթածրարը կրկին վճարեկ տա-
տանին կը դրկէ, վաւերացուելու համար:

Բողոքները քննող յանձնախումբերու մէջ որո-
շումներու ստորագրութեան և զեկուցման ձեւերը,
նայնսւթեամբ վճարեկ տեանի որոշումներուն հա-
մար ալ կը կիրարկուին:

Բողոքէն վերջը լրացուած գործողութեան մէջ,
եթէ սուրքին քանակութեան վրայ տարբերութիւն
մը յառաջ գայ, առիկա ենթակայէն կը գտնուուի և
կամ ենթակային կը վերադարձուի:

(Մանօթ. — Ներկայ օրէնքին համաձայն ճշգուտած
տարքին համար, միմիայն նախնական բողոքէն վերջը
կարելի է վճարեկ տեանին դիմել):

ՏՈՒՐՔԻՆ ԳԱՆՁՄԱՆ ՁԵԻՐ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Ժամանցում (Prescription)

Յօդ. 55. — Ներկայ օրէնքին համաձայն, առաջին մասի ենթակայաներուն համար որոշուած ասուրքերուն կէտը կը վճարէ ելման ատեն տարուայ ներքորդ ամսուան մէջ, և ներքորդ մասի ենթակայաներուն ասուրքն ալ ելման ատեն տարուայ առաջին ամսուան մէջ կը վճարուի:

Առաջին մասի ենթակայաներէն անոնք որ յայտագիրը ժամանակին չեն տուած, յիշեալ կէտ ասուրքը այն ատեն կը վճարեն, երբ ստուգիչ պաշտօնատանց կողմէ սուղակի հաստատուած շահասուրքին զեկուցագիրը իրենց հաղորդուի:

Յօդ. 56. — Տուրքին ներքորդ կէտը և կամ մնացորդը՝ ելման ատեն վեցերորդ ամսուան մէջ պէտք է վճարել:

Երբ ենթակայան կը բողոքէ և վերաքննութեամբ քննութիւն կը պահանջէ, անոր ասուրքերուն ներքորդ մասնավճարը՝ բողոքի որոշումին զեկուցումէն առաջ չի գանձուիր:

(Ծանօթ. — Այս յօդուածին մէջ «վերաքննութիւն» (իսքինաճ) բառը սխալմամբ սպրդած է: Հոս, «վերաքննութեան» իմաստը նախնական քննութեան համար արուած բողոքագրին վրայ յանձնախումբերու կողմէ կատարուելիք քննութեան մասին է:)

Յօդ. 57. — Անոնք որ մասնավճարները և արտօ-

նագրի փոխարժէքը որոշեալ ժամանակին չեն վճարեր, աւերքը և յիշեալ փոխարժէքը հարիւրին 10 յաւելուով պիտի տան:

Յօդ. 58.— Տէրութեան, նահանգներու, գիւղաքաղաքներու, թաղապետարաններու և ասոնց իշխանութեան ներքև գանձուող արհեստական ու առեւտրական հաստատութեանց պաշտօնեաներու շահաւորքը ամօտ ամիս անոնց ամսաթուղակներէն վար կը դրուի:

Տարւոյ մէջ պաշտօնի առնուածներէն՝ անցեալ ամիսներու աւերքը չառնուիր:

Յօդ. 59.— Առեւտրական և արհեստական հաստատութեանց հաշուակալները, վերոգրեալ յօդուածին համաձայն ամէն ամիս իրենց գանձած գրամը մինչև հետեւեալ ամսուայ տասնըհինգը, տեղւոյն ելմտական օրուակին պիտի յանձնեն:

Հակառակը գործող հաշուակալներէն, յանձնելի գրամը, $\frac{0}{10}$ 10 աւելիով կ'առնուի:

Յօդ. 60.— Մասնաւոր ընկերութիւններու, վաճառատաներու և նման ձեռնարկութեանց պաշտօնեաներուն վերաբերեալ, և 58, 59րդ յօդուածներու համաձայն գանձուելիք և յանձնուելիք աւերքերու փոխարէն, ամէն անգամ հիմնական օտաչազիր մը կը արուի հաշուակալներուն: Ասկէ գուրօ, զատ զատ օտաչազիրներ ալ կը արուին, ենթականերունցրուելու համար:

(Ծանօթ.— Յօդուածին մէջ յիշուած հաստատութեանց հաշուակալները, պաշտօնեաներու և օպատարկողներու վերաբերեալ 25րդ յօդուածին համաձայն $\frac{0}{10}$ ին 4 կամ 5 համեմատութեամբ վար գրած գրամին, մինչև յաջորդ ամսոյ 15ը ելմտական օրուակին պիտի յանձնեն և իրենց համար օտաչազիր

Վր պիտի տանեն: Օրէնքը, ասոր «հիմնական ստեղծագրեր» անունը կուտայ:

Իսկ պաշտօնեաներուն կամ «պատարկողներուն» մէն մէկուն տրուելու համար ալ, պիտի կրնայ զատ զատ ստեղծագիր տանել):

Յօդ. 61. — Օրէնքին տողին յետոյ ենթականերէն անոնք որ, ասուքի ենթակայ իրենց ձեռնարկները կը լքեն, կամ ուրիշին կը փոխանցեն, և կամ իրենց ձեռնարկը շարունակած միջոցին կը մեռնին, մասնավճարի ենթակայ չեն, և ասուքը միանուագ կը գանձուի իրենցմէ կամ իրենց թողօններէն (թերեհ):

Այս պարտաւորութեան ենթակայ են նաև օրէնքի երկրորդ մասին մէջ յիշուած այն ոչ-չըջուն վաճառորդները, որոնք գործը լքած ասին անցեալ տարուրնէ անվճար պարտք սւնին, և կամ մեռած տարուան մէջ ըրած գործողութեան տեւողութեան համեմատ ասուքի պիտի ենթարկուէին:

Եթէ, ասանց ասուքը վճարուելու, գործը ուրիշի փոխանցուի, գործը ասանձնողները պատասխանատու կը մնան:

(Մանօր. — Մեանսզը եթէ թողօն չունենայ, ասուքը անգանձելի կը մնայ: Ժառանգորդները, քիչ թէ շատ թողօնին տիրանալու պայմանաւ, պատասխանատու են:

Փոխանցուածով (սեվրեհն) գործ մը ասնողները, նախ պէտք է ստուգեն թէ այդ գործը փոխանցողը պարտք ունի՞ թէ ո՛չ. հակառակ պարագային, իրենք «տիպուած են իրենց նախորդին ասուքի պարտքը վճարել»):

Յօդ. 62. — Երկրորդ մասին մէջ նշանակուած շըջուն վաճառորդները, արհեստավորները և աշխատատեղերը, եթէ տողին մասնավճարէն ասաջ ձգեն ի-

րենց գործը, և կամ մեռնին, ստուգուած ասուրքը
ամբողջութեամբ կը ջնջուի: Իսկ եթէ մասնավճարին
անցնելէն վերջը կը ձգեն իրենց գործը, միայն երկ-
րորդ կէտ մասնավճարները կը ջնջուին:

Միայն թէ, մասնավճարներու պայմանաժամէն
տուշ խնդիրը գրուորապէս ստուգիչ պաշտօնատանց
տեղեկացնելու է:

Յօդ. 63.— Ստուգիչ պաշտօնատուները, ստու-
գիչ քննիչ պաշտօնեան և ելմտական քննիչները, մէկ
ելմտական տարուոյն յատուկ շահատուրքին վերա-
բերեալ գործողութիւնները լրացնելէն և ասուրքը
գանձելէն յետոյ, թէ տարուոյն մէջ և թէ յաջորդ
տարիներուն՝ եթէ ու է ձեւով լուր ասնեն որ ենթա-
կային շահը պակաս անցուած և ասուրքն ալ պակաս
ստուգուած է, և այդ մասին նոր տեղեկութիւն և
ապացոյցներ ձեռք ձգեն, — իրաւունք ունին կրկին
քննութեան և ստուգման իրութեան ձեռնարկել, և
այս պակասը լրացնելու համար ենթակայէն ամէն
տեսակ արձանագրութիւն, փառաթուղթ, և բացառ-
ութիւն պահանջել:

Միայն թէ, երբ ելմտական տարուոյ մը լրանա-
լէն սկսեալ 3 տարի կ'անցնի, յիշեալ տարուոյ վե-
րաբերեալ շահատուրքի պակասին համար կարելի չէ
հետապնդել և պատասխանատու բռնել ենթակաները:

Այս ձեւով յառաջ եկած աւելի շահերուն համար,
նախնական գործողութեան մէջ շահերուն ստուգման
և տուրքին ճշգրտան և գանձման ձեւերը նոյնութեամբ
կը կիրարկուին:

Պակասին ամբողջացման համար տրուելիք ասուր-
քերն ալ 0/0ին 20 յաւելուով կը գանձուին:

Միայն թէ, ենթական եթէ հաստատէ որ պակաս-

որ փութուցնքի արդիւնք է, և ասիկա պատկանեալ պաշտօնեաներուն գործի սկսելէն առաջ անձնապէս տեղեկացուցած ըլլայ, այդ պարագային 20 տոհարիւր յաւելո՞ւմը չի գանձուիր:

Յօդ. 64.— Ելմասկան տարւոյն լրանալէն սկսեալ 3 տարուան մէջ չստուգուած և այդ թուականին մէջ ստուգուած և սակայն ելմասկան տարւոյ լրանալէն սկսեալ առաջ տարուան միջոցին չգանձուած շահատուրքը, ժամանցումի հետեւանքով (միւրիւր գեման, prescription) կը ջնջուի:

ՉԱՆԱԶԱՆ ԵՒ ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 65.— Այն հաստատութիւնները և ընկերութիւնները, որ շահատուրք կը վճարեն իրենց հասոյթներէն, իրենց գործերուն մէջ գործածած փոխադրութեանց միջոցներուն համար առանձին տուրք չեն տար: Այս պարագային, կը արուի ձրի քեզեք մը, որ այնքան տաքն ի գորու է, քանի փոխադրութեան այդ միջոցները միայն յիշեալ հաստատութեանց հրամանին կը գործածուին:

Եթէ փոխադրութեան միջոցները քեզեք չունենան և կամ ունենալով մէկտեղ՝ հաստատութեան գործերէն դուրս սւրիշ բաներու մէջ գործածուին, այդ պարագային Յ1րդ յօդուածին համաձայն արուելիք տուրքին կրկինը կը գանձուի փոխադրութեան միջոցներու տէրերէն:

Յօդ. 66.— Առաջին մասին մէջ նշանակուած ենթակաները, որոնք պարտաւոր են իրենց շահերը յայտագրով տեղեկացնել, ներկայ օրէնքին գործադրութեան դրուած թուականէն սկսեալ, նօտարէն կամ ու-

առեւարական սենեակներէն վաւերացուած, պաշտօնական լեզուով գրուած, և առեւարական օրէնքին համաձայն բռնելիք տնտեսներուն մէջ պէտք է արձանագրեէն իրենց գործառնութեանց ելմտական ընդհանրութիւնը:

Հակառակ ընթացքի մէջ գանուողները, աուրքի յաւելումէն զատ, 10 սօկիէն մինչև 100 սօկի աուր գանքի կը գտապարտուին, կրկնութեան պարագային, այս պատիժն ալ կը կրկնուի:

Երկու տարուան մէջ նոյն վիճակին գոյութիւնը կրկնութիւն կը համարուի:

(Մանօր. — 11րդ յօդուածի ծանօթութեան մէջ ցոյց աուած ենք թէ՛ օրէնքին արամագրած տոմարները որո՞նք են:

Այդ տոմարներուն վաւերացման ձեւք 66րդ յօդուածին մէջ ցոյց արուած է: Օրէնքին նշանակած ձեւէն զատ ու է գործողութիւն պատասխանատուութիւն կը հրուիրէ: Ուրեմն, օրինական չէ տոմարները վաւերացնել աւել ելմտական պաշտօնատան, կամ ալէն մէկ արուեստին ենթակայ հաւաքական մարմնին, — զոր օրինակ փաստաբաններու և բժիշկներու կաճառին, և կամ արհեստակցական միութիւններուն յօնհային:

Տոմարները, կամ նօտարէն կամ առեւարական սենեակէն վաւերացուած պէտք է ըլլան: Օրէնքին պահանջքը այս է:

Ծարդ, վաւերացումը մասնաւորուած էր նօտարներուն: Ներկայ օրէնքը աւելցուցած է նաեւ առեւարական սենեակները, որոնց վաւերացումն ալ օրինաւոր կը նկատուի):

Յօդ. 67. — Ներկայ օրէնքին համաձայն, աուր-

քին ստուգման գործով զբաղող պաշտօնեաները, և
զբուժած տուրքերը՝ բողոքի վրայ կամ վճարեկ տա-
կանի հանգամանքով քննող յանձնախումբի անդամ-
ները իրաւունք չունին իրենց պաշտօնին բերմամբ
անդեկոցած առեւտրական գողանիքը ուրիշներուն
յայտնել:

Հակառակ ընթացքի մէջ գանձողները, 100 սո-
կիէն մինչև 50 սոկի տուգանքի և մէկ շաբաթէն մին-
չև 8 ամիս բանտարկութեան կը դատապարտուին:

Մնայուն պաշտօնեաներուն յիշեալ յանցանքը ե-
թէ կրկնուելու ըլլայ, այլևս երբեք չպիտի գործած-
ուին պետական պաշտօններու մէջ:

Յօդ. 68. — Երկու ամսական նուէր կը տրուի այն
տուգիչ պաշտօնեաներուն, որ շահատուրքը ժամա-
նակին և օրէնքի համապատասխան ձեւով կը տու-
գեն: Նոյն վարձարութիւնը նաև այն քննիչ պաշ-
տօնեաներուն, որոնք ըստ արժանւոյն կը կա-
տարեն իրենց պարտականութիւնը:

Յօդ. 69. — Ներկայ օրէնքին մէջ յիշուած պատ-
ժական արտահրուժիւններուն ամէնքն ալ տեղւոյն
հաշտարար դատարաններուն, կամ անոնց իրաւասու-
թիւնը ունեցող դատարաններու կողմէ կը վճռուին:

(Մանօր. — Տուգանքի, բանտարկութեան, պաշտօ-
նի դադարման պէս խնդիրները պատժական արամա-
դրութիւններ են: Ասոնց որոշման իրաւասութիւնը՝
տրուած է հաշտարար դատարաններու:

Իսկ տուրքին քանակին յաւելման, կամ կրկ-
նութեան պէս գնահատման ենթակայ պատժական
արամադրութիւնները, կը գործադրուին ուղղակի
եւ ժամական պաշտօնատուներու կողմէ:

Արդ, առանց դատարանի որոշման, ելժամական

պաշտօնեան՝ 66րդ կամ յաջորդ յօդուածներուն յեն-
լով, չի կրնար մէկու մը ըսել թէ «10 ոսկի տուգանք
պիտի տաս»:

Նոյնպէս, 59րդ կամ միւս յօդուածներուն մէջ
նշանակուած 10, 0/0-ին 20 յաւելուածով ստուգուած
տուրքերուն համար, ենթական չի կրնար ըսել թէ
«տասնց դատարանի օրոյման չպիտի տամ»: Դասա-
րանները իրաւատու չեն քննելու գնահատութեան
(թագսիր) ձգուած այս տեսակ խնդիրները: Հետեւա-
բար, ենթական եթէ այդ տոթիւ դատարան դիմե-
լու ըլլայ, գտար անլուծելի կը մնայ, կը մերժուի):

Յօդ, 70. — Ներկայ օրէնքին մէջ յիշուած ստու-
գիչ պաշտօնատուները (թեհագուզ իսարեկերի) բտե-
լով, պէտք է հասկնալ «ստուգման մասնաճիւղերը»
(թեհագուզ ժիւպեկերի), և կամ «հասոյթի պաշտօնա-
տուները» (վարիսաթ իսարեկերի) կամ «տուրքերու
վարչութիւնները» (վերկի մեհմուրլըր), նայած թէ
խնդրոյ առարկայ վայրին մէջ ստուգման կազմա-
կերպութիւն կա՞յ թէ ոչ:

ԱՌԺԱՄԵԱՅ ՅՕԴՈՒԱԾ

Յօդ, 71. — Ներկայ օրէնքին արամադրութիւն-
ները, 1926ի ելմտական տարիէն սկսեալ նոյնութեամբ
պիտի գործադրուին հետեւեալներուն նկատմամբ. —

Առաջին մասին ենթականերէն բաժնեթուղթով և
լիմիթթոս ընկերութիւնները, առեւտրական հանգա-
մանք ունեցող համագործակցականները (ֆոսիերաթիվ),
կէդրօնները արտասահման գտնուող ընկերութեանց
մասնաճիւղերն ու գործակալները, յայտագրի հիման
վրայ տուրքի ենթակայ պաշտօնեաներն ու սպասար-

կողմերը, ինչպէս նաև երկրորդ մասին մէջ յիշուած բոլոր ենթակայաները:

Անոնք որ ստոնցմէ դուրս կը մնան և սակայն պարտաւոր են յայտագիր տալ. եթէ յայտագիր չներկայացնեն, պարտաւոր են 1341 տարուայ մէջ իրենց տուած շահատուրքին (թեմեքթիւին) 3 անգամը վճարել 1926 տարուայ մէջ:

Ասոնց արտօնագրերու և տնտեսն պաշտօնագիրներու փոխարժէքը, 37րդ յօդուածին համաձայն կ'առնուի:

(Ծանօթ.— Առժամեայ 71րդ յօդուածին տեսչին պարբերութեան մէջ նշանակուածները, անպայմանօրէն պարտաւոր են յայտագիր տալ: Հակառակ պարագային, անոնց մասին 22րդ յօդուածին արտօնագրութիւնը կը կիրարկուի:

Իսկ ասոնքմէ դուրս մնացած վաճառականներէն, արհեստավարներէն և գործավարներէն անոնք որ յայտագիր տալու օտարութեան են, եթէ չտան, բացառաբար այս տարուան համար նախորդ տարուան «թեմեքթիւին» 3 անգամը պիտի վճարեն:)

Յօդ. 72.— 30 նոյեմբեր 1330 թուակիր շահատուրքի (թեմեքթիւ վերկիսի) առժամեայ օրէնքը, և անոր յաւելուածները, փոփոխութիւնները, և պատերազմական տուրքի (հարպ վերկիսի) մասին 5 Օգոստոս 1328 թուակիր օրէնքով եղած փոփոխումները, և թեմեքթիւ վերաբերեալ ուրիշ օրէնքներու մէջ գտնուած և ներկայ օրէնքին հակառակ եղող արտօնագրութիւնները ջնջուած են:

Յօդ. 73.— Ներկայ օրէնքին գործադրութեան պաշտօն ունին դատական, ներքին, ելմական և տնտեսական գործավարները:

Վ Ե Ր Զ

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0511

255.07.02.01.06.00/